

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻՆ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Եւրոպական թերթեր կը ծանուցանեն թէ կրեոական խնդիրը ա՛յ վերջացած ըլլալով, Պետութիւնները պիտի զբաղին Մակեդոնիոյ եւ Հայաստանի բարեկարգութիւններու հարցովը:

Կրեոաւ օսմանեան պետութենէն ա՛յ բոլորովին զատուած է. ապագայ կազմակերպութեան համար չորս պետութիւնները իրենց միջեւ պիտի համաձայնին, առանց ո՛ր եւ է կարեւորութիւն տալու սուլթանին: Թիւրքիոյ համար հարուածին ծանրութիւնը կտար մը հոգի իրմէն անջատուին մէջ չէ, այլ առ անջատումը հնարաւոր ընելու համար զոյացած եւրոպական համաձայնութիւնն է որ պագային համար ահարկու է: Օսմանեան քաղաքականութեան մեծ յենարանը եղած է միշտ Եւրոպայի պետութիւններուն իրարու դէմ նախանձը եւ փոխադարձ կասկածանքը: Վերջին չորս տարուան մէջ սուլթանը բոլորովին փտահ եղած էր թէ վեց պետութիւնները երբեք պիտի չկրնան միարանիչ արեւելեան խնդրին համար, ուստի եւ ինք կարող էր աներկիւզ շարունակել ըրիտօնեանները խորտակելու, ջնջելու քաղաքականութիւնը: Թիւրքիոյ զոնէ ժամանակակից պատմութեան սուսմասիքութիւնը գոյուշատրութեան եւ խոհեմութեան ազդարարութիւնը մը պիտի ըլլար սուլթանին, եթէ յանձնապատասխան յաւակնոտութեամբ միաքը զրամ չըլլար որ Եւրոպան իր ափին մէջն է: Սուլթանը պիտի անդրադառնար թէ անշուշտ եւրոպական պետութիւնները ամէն առն իրարու դէմ նախանձոտ եւ կասկածաւոր եղած են արեւելեան խնդրին համար, եւ Թիւրքիոյ ամբողջութեան պահպանութիւնը պաւանքին մէջ փնտած են իրարու հետ հաշտ մնալու եւ քաջխաւորութիւնը, եւ սակայն ժառանգի ժամանակ իրենց աս քաղաքական դաւանանքը առժամապէս կախակայած են, ինչպէս նաեւ իրենց փոխադարձ կասկածաւորութեան եւ նախանձին առժամայ զինադադար հոշակած: Թիւրքիոյ պատմութեան մէջ առանց շատ ետ երթալու, վերջին բնան սաբուան վեպերը, որոնք սուլթան Համիտի օրով կատարուեցան, կը հաստատեն աս ճշմարտութիւնը: Դեռ մօտ առնները թիւրքական նահանգներ կին Հըրսել, Պոսնա, Պաթում, Կարս, Կիպրոս, Պուլկարիա: Ու-

րեմն շատ բնական էր մտաբերել թէ Թիւրքիոյ վրայ նոր անպաճառաւորութեան մը համար նորէն անժամայ համաձայնութիւն մը անհնար չէր եւրոպական պետութիւններու միջեւ: Կրեոաւի խնդրին լուծումը այսպիսի համաձայնութեան մը հնարաւորութիւնը կը հաստատէ, եւ իբր բնական հետեանք կը հաւատէ վերջին չորս տարուան եւրոպական քաղաքականութեան փոփոխութիւն եթէ ոչ կատարեալ ստուգութիւնը բայց ստուգութեան մօտեցող հաւանականութիւնը:

Աս նոր քաղաքականութեան նախաձեռնարկը Ռուսիան կը հանդիսանայ: Աստի մը ի վեր է որ կը զգացուի թէ Բեղրպուրի կառավարութիւնը Թիւրքիոյ ըրիտօնեաններուն նպատակները միջամտութեան մը կը պատրաստուի: Հոյոց համար՝ Ռուսիոյ տրամադրութիւններուն նշանը կը տեսնուի զազմականներուն վերադարձին եւ անոնց պահովութեան համար խիստ պահանջումներուն մէջ. հիմա Բեղրպուրի մամուլին — նոյն իսկ հակահայկական մամուլին — լեզուն որուն կը զուգընթանան Կ. Պոլսոյ դեպքան Պ. Չինովիկի զիմումները, կ'ամբապնդեն Ռուսիոյ վրայ յուսալիք համոզումները:

Ռուս մամուլին հրատարակութիւններէն մաս մը կը ներկայացնենք, որպէս զի Հայոց մտքերուն իբր ուղեցոյց ծառայէ այն նոր շրջանին մէջ, ուր կը մտնէ հայկական խնդիրը, եւ որուն պիտի հետամտինք սյաղ արիւնով, առանց ո՛ր եւ է կանխակալ կարծիքի:

«Նոյնը է Վրէմիս», որուն պաշտօնական յարաբերութիւնները հանրաժանութիւնն են, եւ որ Հայոց ծառայութիւն մատուցանելու առիթները չի փնտռեր, կը զրէ:

«Կրեոական խնդրէն ետքը անմիջապէս կուզան Մակեդոնիոյ եւ Հայաստանի խնդիրները: Կրեոական ժողովուրդը ռուս ժողովուրդին դաւանակից է, բայց մակեդոնական ժողովուրդը թէ՛ դաւանակից է եւ թէ՛ համարին: Իսկ Հայաստանը սահմանակից երկիր է: Առ երկու երկիրները եւս կը հեծնն անտանելի բնութեան տակ, եւ ժամանակն է որ սուլթանը հասկնայ թէ պէտք է վերջ դնել հարստահարութիւններուն, կոտորածներուն, ժամանակն է որ երկու թշուառ ազգերը եւս մարդկային իրաւունքներ ստանան: Մամուլին մեծ մասը համոզուած է որ մեծ պետութիւններու համերաշխ եւ վճռական զորձուցութիւնը բաւական է երկու խնդիրները եւս խաղաղօրէն լուծելու. ու առ կողմն մեծ յոյսեր կը դնեն կոմս Մուրաւիկի ճամբորդութեանը վրայ:»

Ուրիշ շատ կարեւոր թերթ մը, «Բեգր. Վիլեստուս-թի», կը գրէ.

«Ահա՛ քանի մը տարի է, հայկական կոտորածներու ժամանակէն ի վեր, որ Վիլհելմ Բ. բացարձակօրէն կը հովանաւորէ թիւրքիան, որ «կեալութիւններու» գէժ սուլտանական ասելութիւնը հիմա քրիստոնեաները գրասպետ սչնչացնելու կերպարանք ստացած է: Պաշտօնական Գերմանիան — բնականաբար զուտ նիւթապաշտական գրգռմաներէ մղուած — իշխանութեան սկզբունքը կրօնքի գաղափարէն եւ խղճի սկզբունքէն վեր կը գտնէ: Աստուծոյ եւ կրօնքի մասին ըմբռնումները Պերլին ենթարկուած են քաղաքական ձգտումներու: Եւ սուլթանը հասկցաւ ատիկան: Այնպէս Վերլին ժամանակներս թիւրքիոյ աս ու ան կողմը կը թափուէր քրիստոնէական արիւնը: Մինչեւ Վիլհելմ Բ. ին թիւրքիա հասնիլը, ինչպէս նաեւ ան տեսնին ալ երբ անիկա ատ երկիրը կը գտնուի, քրիստոնեաներու կոտորածը, հալածանքները եւ ամէն տեսակ արհուսահեղ գեղարքերը չէին պակսեր: Յիշենք Կրեալն, որ 600 քրիստոնեայ կոտորող մահմետականներէն 10-15 հոգի միայն մահուան պատժի ենթարկուեցան. յիշենք Պերսիոյ, Գորատաղի սահմանին վրայ, որ երկու անգամ արիւն թափուեցաւ. յիշենք ընդհարումները սերպիւթիւրքական ու պուլկարեթիւրքական սահմաններուն վրայ. յետոյ՝ Հայերու կոտորածը Վան, որ, ինչպէս կ'ըսենք, շատ ծանր բան է պատահած, գտնուիլ հիւպատոսներու զեկուցումներէն եւ հետազոտութիւններէն որոնք կը լուսաբանեն փոքր-Սոսիոյ կացութիւնը: Վերջապէս խստութիւնները որոնք կը գործադրուին Հայերուն գէժ Վիլհելմ Բ. ի ճամբորդութեանը առթիւ ցոյց կուտան թէ սուլթանը «գերմանական կայսեր բարեկամական զգացմունքներէն» ինչ ուղղութեամբ օգտուելու մտադիր է: Վանի գեղարքերը անուղղակի կը վկայեն թէ թիւրքիոյ Հայոց վիճակներուն մէջ նորէն արձակուած է ԿԱՐԳԱՍՕՍԸ...»

«Եւ ի՞նչ ժամանակներ կուզան: Սուլթանին հակաքրիստոնէական քաղաքականութիւնը ներդաշնակ է քրդական խումբերու ձգտումներուն հետ, նոյնպէս եւ թիւրք մուրացկան վարչութեան շահերուն հետ, ան վարչութեան որուն ոտնիկը կը պահուի Պոլիս գերմանական հիւրերը լաւ ընդունելու եւ գերմանական տուններուն ուղղմամբ քրդապարելու համար: Որ կողմէն որ ալ նայինք գերման կայսեր այցելութեան վրայ, ճառթ մըն է՝ քրիստոնեայ Եւրոպային ուղղուած, եւ պաշտպանութիւն մահմետական աշխարհին ընդգէժ քրիստոնէութեան:»

Ռուս հրապարակագիրը բուն կերպով, զգածեալ շեշտով, զայրագին կը պատարակէ գերման կեղծաւորութիւնը որով քրիստոսի գերեզմանին այցելութիւնը քաղական շահերուն կը ծառայեցնեն. կը վերջացնէ յօդուածը գոչելով.

«Հիմա նորէն կը խաչեն քրիստոսը:

«Հասած է ժամանակը որ պէտք է յիշեցնել խօսքերը որ Փրկիչը Պետրոս առաքեալին ըսաւ. «Միման Յովնանու, սիրե՛ս զիս... արածես զոչխարս իմ:» Կարելի չէ առանց

բողոքի թողուլ փորձը որ կ'ընեն ժամանակակից քրիստոնէութեան հիմերուն գէժ:

«Պայծառ, ձիւնապատ կերտնի նման կ'այրի եւ այրուելով վերջանալու վրայ է քրիստոնէութիւնը թիւրքական արեւելքի մէջ: Ու կը լսուի ձայնը որ կը հնչէ յանդիմանաբար. «Միման Յովնանու, սիրե՛ս զիս:»

* * *

Ան այժմ երկրորդական խնդիր է քննել այն պատճառները որոնք կը մղեն Ռուսիան իր միջամտութիւնը փութացնել արեւելեան խնդրին նոր կարգադրութեան մը համար. մեղի պէտք եղա՞յր այն է թէ Ռուսիա թիւրքիոյ նկատմամբ 1893էն 97 ցոյց տուա՞յ առ երեսու բարեկամութիւնը այլ եւս շարունակելու հակամէտ չէ. գոնէ՛ գործերուն երեսոյթը այս ենթադրութիւնը ներքի կ'ընէ:

Ի՞նչ են Ռուսիոյ խորհուրդները, գէթ Հայոց մասին: Որոշ ոչինչ յայտնի է, բայց հիմկուհիմա կարծուածն է թէ Հայաստանի վերսերմամբ Ռուսիոյ ծրարները երկու մասի կը բաժնուի: Սահմանադրի բանի մը նահանգները չափազանց յուզուած ըլլալով անիշխանութեան կատարեալ քաստի մը մէջ են: Ատ տեղուանքը բարեկարգութիւններու գործադրութիւնը անհնարին կը համարուի առանց զրոն հզօր միջամտութեան. Ռուսիա պաշտօն պիտի ստանձնէ, իբր սահմանակից պետութիւն, բանալիը մտցընել այլ հայկական նահանգները, խաղաղութիւնը վերահաստատել եւ բարեկարգութիւնները գործադրել: Իսկ ուրիշ նահանգներ բաղադատաբար աւելի խաղաղ մնացած ըլլալով հոն կարելի պիտի ըլլայ առանց ռուսական գրաւումի քրիստոնեաներուն ապահովել մարդավայել կենցաղաւարութիւն:

Գործը առ այժմ կէս անորոշ վիճակի մէջ է. աւելի ընդարձակօրէն խօսելու առիթները անշուշտ պիտի ներկայանան:

Հիմկուհիմա սակայն կը կարծենք որ թիւրքերը Ռուսիոյ միջամտութեան ձայնը լսելով քիչ մը ինքզինքնին կը յողովտան. ու աս իսկ օշուտ մըն է Հայաստանի համար: Հաստատուած իրողութիւն մըն է թէ, ամէն անգամ երբ քրիստոնեաներու օչնութեան խնդիր մը ծագի, էն հասարակ թիւրքն իսկ երբ կը լսէ թէ քրիստոնեաներուն պաշտպանութիւնը ստանձնողը Անգլիան է, արհամարհանքի ժպիտով մը ուսերը կը թոթուէ. հայկական կոտորածները անգամ մը եւս իրաւունք տուին թիւրքական այս արհամարհանքին: Իսկ երբ կ'իմանան թէ միջամտողը Ռուսն է, թիւրքնին բերանին կը ծովակի, ու գլուխնին ուսերնուն մէջ քաշելով կ'սրբաբաժակ տեղերնին կը գառնան:

* * *

Երբ հայկական խնդրին Ռուսիոյ հովանաւորութեամբ վերաբացուելուն մեծ հաւանականութիւն կայ, մեր պազայ ուղղութեան համար յիշեցնենք ինչ որ «Մարտ» թիւ 1898 մարտ 10 թիւին մէջ կը գրէինք իբր եզրակացու-

Թին հայկական խնդրին նկատմամբ Ռուսիոյ հետեւած քաղաքականութեան վրայ մեր պատմական ուսումնասիրութեան: Ահա ինչ որ կ'ըսէինք.

«Թիւրքիոյ նկատմամբ Բեդրպուրիի քսան տարուան քաղաքականութեան պիտաւոր գծերուն պատկերացումը ահա ցոյց կուտայ որ Ռուսիա եթէ միօրինակ ուղղութեամբ կը հետամտի Թիւրքիոյ քանդումին, նոյն սնխատար ընթացքին չի հետեւիր հայկական խնդրին մէջ. օրուան նկատումներուն համեմատ ուստական քաղաքականութիւնը մերթ մեզի նպատաւոր կը միտի, մերթ ա՛ն նպատա: Այդ փոփոխութիւնները տեսանք. նպատաւոր՝ Ալեքսանդր Բ. ի օրով. աննպատա՝ Ալեքսանդր Գ. ի գահակալութեամբ. նպատաւոր՝ Սառնուհի ետքը. աննպատա՝ մեծ կոտորածներու սկզբնատարութեանը. նպատաւոր՝ 1896ի առաջին ամիսներէն սկսած: Արեւմտ առաջնորդելով անցեալէն կարող ենք սպասել թէ ասիէ ետքն ալ այդ քաղաքականութիւնը կրնայ ենթարկուիլ այնպիսի փոփոխութիւններու որոնցով մենք ալ մինչեւ աստիճան մը թերեւս կարենանք օգտուիլ: Օրուան քաղաքականութիւնը ուժ կուտայ այս տեսութեան: Ռուսիոյ կողմէն հակաթրքական միջամտութեան մը նշանները օրէ օր կ'աւելնան:»

Ու կ'աւելցնէինք.

«Թիւրքիա քսան տարուան խաղաղութենէ յետոյ այսօր կը դանուի շատ աւելի վատթար կացութեան մէջ քան 1876ին: Իկնաթիլի բոլոր խորտակու ճարպիկութեամբ չկրցաւ հասցնել Թիւրքիան այս օրուանին պէս սղորմելի վիճակի մը: Բանակը անզօր, անտեսական վիճակը յուսահատական, բարոյական վարկը փճացած: Օսմանեան կայսրութիւնը այսօր հոգեվարք կէս-գիակի մը պէս փռուած է Ռուսիոյ սարքերուն տակ. ու Եւրոպան իր վրդովեալ խղճին հանդարտացումը ձարէն կ'ակնկալէ: Այսպէս չէ՞ր եւ 1876ին ալ, պուլկարական կոտորածներէն ետքը:»

ՉԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՋԵՒ

ՀՐՈՍԱԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

Ո՛ր եւ է անհատ եթէ քիչ մը բան կ'արժէ, ան ալ իր մէջը կրած ըմբոստացումի զգացումովն է:

Արմուտանցի Նշան Քէլչիեան պատուելիին մահը «Նոր կեանք» ի առաջին թիւերուն մէջ ծանուցինք, միանգամայն հաղորդելով որ իր յիշատակները ուղած է: Չորս հաստ տետրակ են ասոնք, «Հրոսակի մը յիշատակները» վերնագրին տակ: Եզրիպոս անապատի մը անկիւնը, Գահիրէ փառ մը, հանդիպած տեղը, նախկին հրոսակը 1897 ապրիլէն մայիս թուղթի վրայ նետած է ինչ որ կը յիշէր, կարծես զգալով որ մահը առջին ինկիր է: Պատուելին

նախնական կրթութիւն մը միայն առած էր, իր պրոֆիւնտ ալ մասենագրական արուեստի հրապոյրէն զուրկ է: Եւ սակայն մերթ ուրա՛նութեան մերթ տխրութեան հասնողը կարգա ի այդ յիշատակները, ժողովրդի մը անպրած կեանքին կոկիծներուն եւ հրճուանքներուն բանաստեղծութիւնը կը բղխի անոնցով:

Յեղափոխութեան շունչը մեծ ու փոքր Արմուտաննեւրուն վրայ ալ փչեց: Թիւրք իշխանութեան գէժ մեր ըմբոստացումին պատմութիւնը ուսումնասիրողները բնակութեամբ պէտք է քննեն այն պատճառները որոնք Պոլիս ու երկրին ամէն կողմը կոխի մղեցին հայ երիտասարդութիւնը: Շատ անգամ կեանքի նիւթական տառապանքներն են՝ հացի պակասութիւն, վարչական հարստահարութիւն, եւայլն, որ ժողովուրդ մը կը հարկապահ իշխանութեան գէժ ելլելու: Նիւթական պէտքի համար յեղափոխութիւնը աւելի անանական բնագոյ մըն է քան թէ ազնուազգի զգացումներու թելադրութիւն: Եւ մէնի իսլամները թիւրքին գէժ զէնք կ'առնեն երբ հացերն ին կը պակսի կամ հարստահարութիւնները կը սաստկանան. նիւթական պահանջներու գոհացումը ստանալէ յետոյ կը հանդարտին: Անտուններն ալ նեղը մնացած աստիճան իր հեծումները կը մոռնան ու վտանգի կ'ենթարկեն ինքզինքնին. «Անթուլիւնը գոյլը լեռնէն վար կ'իջեցնէ:» Պատուելիին թուղթերէն Արմուտաններու նիւթական կեանքին վրայ սրոշ զազափար մը կազմելով հանդերձ, Արմուտանցիներէն ալ բերանացի տեղեկութիւններ քաղեցի: Կը տեսնուի թէ Արմուտաններու Հայերը առանց շատ երջանիկ համարուելու բաւական հանդիստ կեանքով կ'ապրէին 1889-90 թուականին: Ընդհանրապէս Փոքր-Հայքի Հայերուն վիճակը կրնար մինչեւ իսկ գոհացուցիչ համարուիլ, մանաւանդ բազմաթիւ Մեծ-Հայքի հոյ ժողովրդին կացութեանը: Եւ այդ Փոքր-Հայքն է որ Յեղափոխութեան վառարանը դարձաւ: Նիւթական պէտքը չէր որ հայ երիտասարդութիւնը Յեղափոխութեան կը մըղէր. անարատ հայրենասիրութեան զգացումներով ի սնուած էր այդ երիտասարդութիւնը. աներկրաւոր էին իր բաղձանքները, ուստի եւ պերազանցօրէն աշխուհ:

«Հրոսակի մը յիշատակները» կարդի դնելով կը հըրատարակեմ, յայտնի անուններէ ուսանց տեղ ծածկանուններ գնելով. չեմ գիտեր ո՞վ ողջ է ո՞վ մեռած. ո՞վ հայրենիքը կը գտնուի ո՞վ բանտը: Կը պակսին թուականներ, պիտի ջանամ փնտռել ու լրացնել:

Մեր վերջին 30 տարուան պատմութիւնը մէկանց ամբողջութեամբը կրել զեռ հիմա գրեթէ անկարելի է. կրուագներ միայն կրնանք հրապարակ հանել. ուրիշները օր մը ասոնք իրարու քով պիտի բերեն, պիտի քննեն, պիտի բազմապատեն եւ նորանոր դիտերու օգնութեամբը պատմութիւնը ամբողջութեամբը պիտի ներկայացնեն: Հիմկուհի մը մենք նախնական նիւթերը պատրաստենք ապագայ պատմա յիշերուն համար:

ԱՐՓԻԱՐ ԱՆՓԻԱՐԵԱՆ

Ա

«Հրոսակի մը յիշատակներ»ուն գործողութեան վայրը Գուրիչայ գաւառակն է որ կը բազկանայ 66 գեղէ. ասոնց վիցը միայն հայ են, մնացեալները թիւրք եւ քիւրտ. սակայն հայ գեղերը ամենքն ալ բազմամարդ են, մին ոչ-հայ գեղերէն շատը 5-6 տուն միայն ունին:

Հայ գեղերուն մէջ են նշանաւորները Մեծ ու Փոքր Արմուտաններն են, ընդարձակ դաշտի մը մէջ: Մեծ-Արմուտանը դէպի արեւմուտք շինուած 300 տուն ունի ու եկեղեցի մը Ս. Աստուածածին. Փոքր-Արմուտանը դէպի արեւելք է, 73 տունով, եւ եկեղեցին Ս. Աստուածամար: Լեւոնաշղթայ մը կը պարուրէ այս գեղերը որոնք պարտէզ-ներով պաշարուած են, պարտէզներու մէջ թաղուած. ու երկայն բարտիններ, խոշոր թիթենիներ եւ ընկուզենիներ կը շրջապատեն, կը զարդարեն տուն եւ պարտէզ: Եկեղեցի-ները եւ քանի մը շէնք միայն զրաւն կ'երեւին, միւս բոլոր տունները կ'աներեւութեան ծառաստաններուն մէջ: Այ-գիները տնկուած են դէպի հարաւ, զետակի մը երկու կող-մը, ուր մրգեղէնը լիստատ է: Կը պակսի անուշ ջուրը որ սակայն ժամուան մը հեռաւորութենէ կը բերուի:

Գաւառակին կեդրոնը ուր կը նստի գայմադամը, շինուած է Արմուտանէն երեք ժամ հեռու դէպի հիւսիս լեռան մը ստորոտը, երկայն ձորի մը մէջ վաղող գետակի մը ափը. քսան տուն բնակիչ ունի: Դէպի արեւելք 3 1 2 ժամ հեռու, նոյն գետակէն բաւական վեր կը գտնուի Հասան Օլա զուտ հայ գեղը. ունի 43 տուն, եկեղեցի մը եւ քահանայ մը: Դէպի արեւմուտք, իրարմէ բաւական հեռաւորութեամբ կը գտնուին Ապուշայ՝ 23 տունով զուտ հայ գեղը, ե թուրքա՝ 83 տուն հայ եւ 35 տուն թիւրք: Դէպի հարաւ, երկուքուկէս ժամ հեռու, Տիվրիկի սահ-մաններուն մէջ բլրի մը վրայ մատուռ մը կայ Ս. Գէորգի անունին: Ասկէ երկու եւ երեք ժամ հեռաւորութեամբ նոյն Տիվրիկի գաւառակին հայ գեղերն են. դէպի հիւսի-սային արեւմուտք Չիմառա՝ 120 տուն հայ, 20 տուն թիւրք բնակիչ. Կասա՝ 110 տուն հայ, 50 տուն թիւրք: Դէպի արեւելեան հարաւ 4 1 2 ժամ հեռու, լեռան մը ստորոտը ամուրու գեղեցիկ զիրքով շինուած է Բինկեան, Ակնայ գաւառակին պատկանող, 260 տուն հայ եւ 15 տուն թիւրք բնակիչ. դէպի արեւելք նոյն գաւառակին պատկանող Լիճ անուն զիւրը 50 տուն հայ եւ 18 տուն թիւրք բնակիչ ունի:

Տարին քանի մը անգամ բոլոր այս գեղերու բնակիչները կը հաւաքուէին Ս. Գէորգի մատուռը. ուխտագնացութիւն էր: Երիտասարդները կուգային փառաւորապէս զինուած. ու կարծես այդ լեռները զուրկեցեալներու եղած ըլլային, եւ րիտասարդութիւնը հրացանաձգութեամբ կ'անցընէր ժա-մերը: Գեղերուն մէջ մըցում կար նշանաւորութեան հա-մար. թիբախին լաւ նշան անող երիտասարդը օրուան հերոսը կը հռչակուէր, ու իրմով կը բարձրանար իր գեղին

անունը: Առաջին մրցանակը միշտ Բինկեանցիներուն էր, երկրորդը՝ Մեծ-Արմուտանցիներուն:

Արմուտան 1888-89 թուականին երկու կուտակցու-թեան բաժնուած էր, միապետական եւ ազատական. խո-շոր յորջորջուցներ որոնց խրոխտահանակ արտասանութիւ-նը սպեղանի կը համարուի շատ մը վերքերու որոնք զրե-թէ միշտ ազատականներուն բաժինը կ'ըլլան: Միապե-տական կուտակցութեան պետն էր Արիանեան տան նա-հապետը՝ մեծահարուստ մահտեսի Սահակ աղան, հետե-ւորդ ունենալով միւս ազանները իրենց ստորագրասեղանե-րու բազմութեամբ: Ազատականները թիւի կողմէն մեծ ուժ մը չէին ներկայացներ, բայց գերազանցութիւննին ի-րենց յատկութեանը մէջ էր՝ զօրաւոր կամք: Միապետա-կան եւ ազատական կուտակցութիւնները իրարու անհաշա-թշնամի դարձնող կարեւոր մէկ խնդիրը փարախի գործն էր: Հնաւանդ սովորութեան համեմատ զիւրին ամբողջ տաւարը միասին կ'արծուի արօտաւայրը. ոչխար ունե-ցողներէն ոմանք — ազատականներ — ուզեցին իրենց առանձին փարախը ունենալ. զիտէին թէ մասնաւոր խը-նամք տանելով ոչխարները շատցնել կարելի էր. միապե-տականները այս նորամուտ սովորութեան չհաւանեցան, եւ շինուած փարախները փլցնել տուին: Իրենց այսքան յաջողութիւնը բաւական չհամարելով ուզեցին սպասույս տեղաբացնել ազատականները. իրենց նպատակին հասնե-լու են յարմար միջոցը համարեցին կառավարական մի-ջամուտութիւն հրաւիրել ազատականներուն դէմ: Իրենցմէ մէկը զնաց տեղական իշխանութեան հաղորդեց թէ այս ինչ անձերը յարաբերութեան մէջ են կարինի «խռովա-բարներուն» խռովին հետ. այս զրպարտութեամբ միա-պետականները դրամական շատ փաստաւորեցին ի-րենց հակառակորդներուն: Երբ աստան թէ զրպարտու-թիւնը յաջող զէնք մըն է, ա'լ շարունակեցին աւելի ըն-դարձակ սահմանի մէջ գործել: Քսանէն աւելի տուն իրը խռովարար զրպարտուեցան. զործը մինչեւ Երիզա ինկաւ. ընդհանուր դատախազի օգնականը քննութեան գա-լով Արմուտան խուզարկութիւններ կատարեց. նամակ-ներ ու թուղթեր տարուեցան, բայց ետքէն ամենքն ալ ետ խրկուեցան: Գործին զաւելջտական կողմը հոն է որ զրպարտիչը որուն տունն ալ խուզարկած էին, փորձան-քին մեծին հանդիպողը ինք եղաւ. իր թուղթերը վար զրին ու ինքն ալ կանչուեցաւ. բայց փախաւ. սակայն ետքէն բռնուելով բանտարկուեցաւ:



Կ'անցնին օրերը. եւ ահա Պոլսէն 1890 յուլիս 15ի ցոյցին շփնդը կը հասնի. ամէն կողմ ցնցում: Ու քիչ ետքը կը լսուէր թէ Շմաւոն անուն յեղափոխա-կան մը Փոքր-Հայք անցած բաց է բաց կը բարոզէ, կը կազմակերպէ. ա'լ ազատականները սրտանց ըզձացին, իրենց կոչումին արժանաւոր ըլլալով, փարախի շրջանա-կէն անկին աւելի ընդարձակ ասպարէզի մէջ գործել: Սա-կայն միապետականներու ընթացքը վարանտ կ'ընէր զի-

րենք. երբ դեռ հակախառնարական ո՛ր եւ է գործի չձեռնարկած կը զրպարտուէին, ի՛նչ մատնութիւններու պէտք էր սպասէին կանոնաւոր շարժումի մը կազմակերպութեան ձեռնարկուած պահուն: Քայց որքան ժամանակը կը յառաջանար վարանումներն ալ հետզհետէ ակարանալով ազատականները կազմակերպութեան մը նախապատրաստութեան կը հետամտէին:

Գարնանային առտու մը, 1891 ժայիս 14ին, Քէշիշեան Նշան պատուելին փոքր-Արմուտան իր սենեակը նստած էր բարեկամ եկեղեցականի մը հետ. երկուքն ալ կանաչները դիտելով մտածութիւններու մէջ խորասուզուած էին. ու ահա ներս մտաւ փառաւոր ժորուքով բարձրահասակ մարդ մը, ու բարեւտալով նստաւ. Մեծ-Արմուտանի վարժապետ Խաչիկ պատուելին էր: Յայտարարեց թէ գաղտնի խօսք ունէր. ուստի դուռը փակեցին եւ վարժապետը ըսաւ.

— Գիտէք թէ մեր ալլըր վարաւոր սարկութենէ ազատելու համար գաղտնի ընկերութիւն մըն է հաստատուած. այդ փրկութեան ձեռնարկին մղում տալը մեզի եւ ձեզի պէսներու գործ է. կ'ուզէ՞ք օգտակար դառնալ այդ սուրբ գործին:

— Ինչո՞ւ չէ, պատասխանեցին միւս երկուքը:

— Ուրեմն սա թուղթերը կարդալով ստորագրեցէք յանուն ամենասուրբ Երրորդութեան, ըսաւ Խաչատուր պատուելին:

— Լաւ, ըսին. ու կարդալով ստորագրեցին:

— Ուրեմն դուք ասկէ ետքը ձեզի ծանօթ ընկերներէն որու վրայ որ համարում ունիք կանչեցէք եկեղեցի, սուրբ Խաչին առջեւ սոյնանման թուղթեր գրելով երգմունցուցէք, եւ ստորագրութիւններն առէք քովերնիդ վար դրէք. յաջորդ շարժում իրար կը տեսնենք եւ նոր անօրինութիւններ կ'ըլլան:

Աս ըսելով Խաչատուր պատուելին մեկնեցաւ:

Նոր կեանք մը կը սկսէր Նշան պատուելին ու իր եկեղեցական բարեկամին համար. ա՛լ գործի վրայ էին. հաւատացողի եռանդով սկսան իրենց խումբը ստուարացնելու աշխատիլ: Միւս շաբթուն որոշեալ օրը անհամբեր կը սպասէին նոր անօրինութիւններու. օրը հասաւ ու Խաչիկ պատուելին ալ եկաւ:

— Տեսնեմ ի՛նչ ըրիք, հարցուց:

Երկու բարեկամները երեսունէն աւելի երգմնագիր յանձնեցին. առաւ ու գոհ մնաց: Պատուիրեց միւս գիշերը ժամը մէկուկէսին որոշուած ձոր մը գտնուիլ. ինքն ալ հոն պիտի ըլլար:

Որոշեալ ժամուն նշանակուած ժամագրաւայրը գտնուեցան Նշան պատուելին, իր եկեղեցական բարեկամը ու իրենց ընկերները, եւ ահա եկաւ Խաչիկ պատուելին ալ, հետը ընկեր մը, ռուսական Պերտանով զինուած: Հրացանակիրը նոր ընկերները շնորհաւորելէ յետոյ զրպանէն թուղթ մը հանեց եւ կարդաց. ասպատակային խումբի մը կազմակերպութեան ծրագիրն էր հետեւեալ իմաստով. «Այլ եւս թիրբին մալը մեզի հալալ է. անոնք հինգ հա-

րիւր տարիէ ի վեր մերինը կ'ուտեն. հիմա կարգը մերն է:»

Ո՛չ սք զիտէր թէ այդ ծրագիրը ճշտից եկած էր եւ սուսօղը ո՛վ էր. միայն թէ թողած տպաւորութիւնը լաւ եղած էր: Յետոյ իմացուեցաւ թէ քարոզիչ առաքեալը Պոլսն եկող բժիշկ մըն է, որ իր արհեստին պիտութիւնն ներքն օգտուելով յեղափոխական կազմակերպութեան մը կը հետամտէր:

Չորը, զիշերուան մութին զուարուած այդ ժողովը իր մէջ խորհրդաւոր բան մը ունէր որ ելեկարեց բարձր պաշտօնները: Այդ գիշերային խաւերէն սիրոյ եւ եղբայրակցութեան լոյսը ծագեցաւ Արմուտանցիներուն: Երկու գիւղերը տեղական խնդիրներու պատճառաւ միշտ անհաշաէին ու կուտաւ իրարու հետ. հիմա զրկախառնեցան, իրարու կապուեցան անանկ սիրով մը որ անոնց անցեալը գիտցողին ապշութիւն պիտի պատճառէր: Ալ հիմա վեր կը բարձրանային պզտիկ պզտիկ վէճերէ, սասորնացուցիչ կոխներէ սրանք գիւղի մը օրուան կեանքը կը կազմեն, վասն զի ազնուական գաղափար մը իր շուրջը չի բոլորեր հոյիներն ու մտքերը: Ալ հայրենիք, ազատութիւն, յեղափոխութիւն, երկու Արմուտաններու երիտասարդութեան մտքի միակ զբաղումն էր, սրտի տրոփումը: Յեղափոխականները կը հաւաքուէին, որոշումներ կ'առնային, կարգադրութիւններ կ'ընէին: Կազմակերպութեան իբր հիմ տասնեակներու բաժնուեցան. երկու գիւղին մէջ տասներկու հատ տասնապետ կային: Ու այս ամէնը կ'ընէին իրենց իրենցմէ, սպասելով առաքեալին զրաւոր ծրագրին որ խրկել խոստացած էր:

Ետանդուն կ'աշխատէր Նշան պատուելին իր գիւղին մէջ. բոլորովին նուիրուած էր գործին. ժողովները իր տունը կը գումարուէին: Օր մըն ալ մեծ բազմութիւն մը խրուում էր իր դրան առջեւ, ուր արինթթաթախ մարմին մը կար: Պատուելին մշակը, քիւրտի լաճ Ահմետը, փայտ կտրելու զացած ատեն, ճամբան ոտքը շորիին թիլլէն մը նալով քարէ քար զարնուած էր ու մահամերձ դարձած: Տեղական իշխանութիւնը զացած քննած էր ու վիրաւորեալը բերած տիրոջը դրան առջեւ դրած: Ահմետին հայրը, բարեկամները հաւաքուելով կը պոսային թէ աղանին կ'ուզեն: Վիրաւորը ուրիշ տեղ փոխադրուեցաւ. նոյն օրերը առաքեալ-բժիշկը շրջականները մօտ գիւղ մը եկած ըլլալով պատուելին հրաւիրուեցաւ զայ գարմանել մշակը: Յոյս չի կար, բայց սրբաւ զի հիւանդին տիրուտանքը ուրիշ գիւղ մը փոխադրեն անիկա, յայտարարեց թէ «բան մը չունի, կ'աղէկնայ:» Անոնք ալ աոին տարին տղանին, որ նոյն օրը մեռաւ: Այս գէպքը առիթ մը եղաւ Պատուելին շատ վախեր տալու եւ իրմէն դրամ քաշելու:

Ու ահա երկու օր ետքը Տիվրիկէն տասնըջորս ձիաւոր առտու մը կանուխ գիւղը մտնելով տողթորը հարցուցին. պատասխան տրուեցաւ թէ հոն չէր: Յեղափոխականները մտատանջութեան մատնուեցան. բան մը ըլլալու էր. անմիջապէս բժշկին, որուն տեղը գիտէին, լուր խրկեցին. բայց լուրը չհասած՝ անիկա Քեմախի մէջ բռնուելով Երիզա տարուեցաւ, ու անկէ Սեբաստիոյ բանտը:

Մատնուած էր Տիւրիկէն: Այս ձերբակալութիւնը մեծ ցաւ պատճառեց Արմուտանի յեղափոխականներուն, բայց ա՛լ իրենց միտքը բաւական զօրաւոր էր, գաղափարը զբաւառած էր զիրենց, ուստի չյուսահատեցան. միայն թէ ծրագիր խոստացողը այլ եւ՛ չի կար, ու պէտք էր հնարը նայիլ:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ա

ՊԱՐՍԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ասիայի այն երկիրներուն մէջ ուր գտնուեր են Հայերը, եւ Եւրոպացիներուն չէ եկեր իր բարձրագոյն քաղաքակրթութեամբ, Հայերը միշտ գործունէութեան ապարէզը գրաւեր են տիրաբար: Հայը իր ընդունակութիւններով կրցեր է տիրանալ գրեթէ ամբողջ առեւտրական գործին եւ քաղաքակրթութեան միջնորդի դերը ստանձնել: Այսպէս եւ Պարսկաստանի մէջ: Ահնարի մը ձգելով պատմական բազմազան մօտիկ անցեալին վրայ, կը տեսնենք թէ Շահ Աբբաս ի՛նչքան զիտակցաբար ըմբռնել էր հայ ժողովրդին այս ձիրքերը: Ո՛վ չի գիտեր տխուր ու սրտաճմլիկ պատմութիւնը, երբ Պարսից այդ մեծ արքան ամայացուց ամբողջ Արարատեան գաշտը, խմբովին գերի տանելով բոլոր հայ բնակիչները: Արարատ աւերակ դարձաւ, սակայն Պարսկաստանը կը շէնար, չարքաչ եւ օժտուած ժողովուրդ մը նոր հայրենիքը մը կը ստեղծէր հոն իրեն. Սպահան հայաշատ կեդրոն կը դառնար եւ Նոր-Ջուղայի ճոխ շահաստանը կը հիմնուէր: ԺՉ. դարէն սկսած Պարսկաստանի ամբողջ արտաքին վաճառականութիւնը Հայերուն ձեռքը անցաւ մինչեւ մեր օրերը (թէ եւ այժմ նուազած), եւ առեւտրական յարաբերութիւններ սկսան նորակազմ Ռուսաստանի հետ, Հնդկաստանի հետ ուր պէթեց Սպահանի հայ ժողովրդին մէկ մասը տարիներու ընթացքին մէջ, եւ ամբողջ Արեւելքի հետ:

Պարսից Շահերը չէին կարող շտեմնել իրենց հայ հպատակներուն այս փայլուն յաջողութիւնը եւ երկրին հեւըզհետէ շէնալը, ու չէին կարող զլանալ իրենց պաշտպանութիւնը այն ժողովրդին որուն միջոցաւ կապեր կը հաստատուէին իրենց եւ եւրոպական ազգերուն միջեւ: Հայ բանասիրութեան համար տարօրինակապէս շահեկան նիւթ պիտի ըլլար Պարսից եւ Հայոց այդ յարաբերութիւնները նոր պատմութեան շրջանին մէջ: Մենք այստեղ ներկայով միայն կը զբաղինք:

Արդի շահին հայրը, հանդուցեալ Նասրէտտին շահը, շատ լաւ ըմբռնած էր հայ ժողովրդին օգտակարութիւնը իր երկրին համար եւ մասնաւոր հոգատարութեամբ կը վերաբերուէր զէպի Հայերը: Իր օրով Հայերուն վայել-

ած արածունութիւնները մինչեւ անգամ կը զրգոկին տեղական տարրին, միախառն ժողովրդին զայրոյթը, թէ եւ այդ ժողովուրդը միշտ պիտոցած է յարգանքով նայիլ զէպի «Էրմանի»ները:

Սակայն Պարսկաստանը իր քաղաքակրթութեան առաժնային, իր կառավարական կազմակերպութեամբ, զինուորական ուժով եւ վերջապէս ամբողջ շէնքովը եւ մնացած ըլլալով ոչ միայն եւրոպական տէրութիւններէն այլ եւ իր զրացի երկու պետութիւններէն, միշտ ենթարկուեր է այս ու այն կառավարութեան ազդեցութեան, զոհեր է իր շահերը, եւ շատ անգամ, իր փափաքին հակառակ, թոյլ է տուեր զորձեր որոնք իրենց հետեւանքներով ազեւտալի կերպով ծանրացեր են իր հայ հպատակներուն պիտուն:

Երեք պետութիւն, Անգլիա, Ռուսիա եւ Թիւրքիա, զբերթէ շարունակ մեծ դեր կատարեր են Պարսկաստանի մէջ, երեքն ալ բոլորովին տարբեր շահերով եւ պատմութիւններով:

Անգլիոյ զիտումները լոկ վաճառականական են եւ մասամբ միայն աշխարհակալական: Հանդուցեալ Շահին օրով Անգլիոյ ազդեցութիւնը աւելի մեծ էր Պարսկաստանի մէջ եւ կը կրթնէր «անգլիաւորներ»ու, ըսենք, մասնաւոր կուսակցութեան մը, որուն զուտը կանգնած էր շահին անդրանիկ, բայց անհարազատ կնոջմէ ծնած, որդին, Չիլի-Սալթանէն, ընդհանուր կառավարիչ Սպահանի, իր կտրճութեամբ ու խելացութեամբ ծանօթ ամբողջ Պարսկաստանի մէջ: Երբ Պարսկաստան դեռ մուսուլման չէր փամփիշտաւոր հրոյցան, Անգլիան զրգեց Չիլի-Սալթանէն ահագին քանակութեամբ նոր սիսդէմի «Վարանտի» հրացաններ փոխադրել արտասահմանէն Սպահան: Նասրէտտին շահը, եղելութեանը սեղեկանալով, լըռեւեայն գրաւել տուաւ բոլոր հրացանները: Անոր մահու ընդէն յետոյ ապարդիւն մնացին Անգլիոյ շահերը Չիլի-Սալթանէն թագաւորեցնելու ինչպիսի մէջ: Անգլիա կը պարտուէր, ու գահ կը բարձրանար ռուսական պաշտպանեալ Թաւրիզի Վալիթաթ (գահաժառանգ) Մուզաֆերէտտին (1896 յուլիս):

Թիւրքիա մինչեւ վերջերը Պարսկաստանի մէջ հետեւած չէր քաղաքականութեան մը որ ո եւ է կերպով աչքին առաջ սեննար Հայերը: Բայց կրբ սուլթան Համիտ իր հայահալած քաղաքականութեան ձեռք գրկաւ, անմիջապէս ուշադրութիւն դարձուց զէպի Աւրպատականի հայաշատ նահանգը, ուրտեղ վերածնութեան գործ մը սկսած էր դպրոցներով ու ընկերութիւններով, եւ ուր Հայերը կը սկսէին թօթափել իրենց թմբուցութիւնը: Թիւրքիոյ աչքին փուշ մը եղաւ ասիկա, ու ձեռնարկեց ամէն միջոցներով վրդովելու Պարսկահայերուն անդորրութիւնը: Թէհրանի մէջ 96ին թիւրք գետպանին նախագահութեամբ կազմուեցաւ ժողով մը Պարսիկները Հայերուն զէմ զրգոկելու միջոցներուն մասին խորհրդակցելու եւ խարդաւանանքներ նիւթելու համար: Դեռպանը ներկայացաւ Ն. Ս. րէտտին շահին եւ յայննեց թէ Հայերը Պարսկաստա-

նի մէջ դաւադրութիւն մը սարքած են Պարսից կառավարութեան եւ Շահին անձին զէմ: Շահը չլաւանցաւ անմիջապէս զեսպանին ներկայութեան կանչելու սատրագամը եւ հրամայելու որ անձամբ քննէ ու ստուգէ Հայերուն մեղադրուած այդ ամբաստանութիւնը եւ զեսպանին ապացուցանէ Հայերուն հաւատարմութիւնը եւ Պարսկաստանի մէջ անոնց սենեցած օրինակելի վարմունքը: «Վեհափառ շահ, կը պատասխանէր անմիջապէս սատրագամը, Հայերուն մասին տարածուած այդ բոլոր ամբաստանութիւնները շինծու են եւ ես կեանքովս կ'երաշխարեմ անոնց հաւատարմութիւնը:»

Այդ գոբազդ թուականէն սկսած, Պարսկահայը սկըսաւ կորսնցնել իր հանգստութիւնը եւ մինչեւ անգամ մօտալուտ կոտորածի արհաւիրքը ունեցաւ յաճախ: Ամէն ոտիթ միշտ թիրք գեսպանէն կամ հիւպատոսարանէն կը բղկեր: Թաւրիզի օսմանեան հիւպատոսարանին ծառաները հայ տարագով սկսան այս ու այն կողմ անկարգութիւններ գործել, վեցհարուածեան պարպել սէրգների վերայ, մէջիցի դրան մօտ կեցած ծաղրել ու հայհոյել Շիբ օրէնքը եւայլն եւայլն: Նոյնպէս Սալմաստի եւ Խոյի սահմաններուն վրայ հայ տարագով թիրք ու պարսիկ աւազակներու խումբ մը երեսան եկաւ որպէս հայ յեղափոխականներ, եւ սկսաւ կողոպուտ գործել ու մինչեւ անգամ կառավարութեան սուրհանգակը զարնել ու թալլել. սակայն աւազակներուն խումբը շուտով ձերբակալուեցաւ եւ խմբապետ պարսիկին խոստովանութեամբը յայտնի եղաւ թէ Թաւրիզի օսմանեան հիւպատոսարանն էր որ գիրենք հրահանգած եւ 300 օսմ. ոսկի տուած էր այդ գործին ձեռնարկելու համար: Իսկ Սալմաստ կը զրպարտուէր որպէս հայ յեղափոխականներու «ահպին բանակներու» կեղծանալայր, մեծաքանակ ռազմավորներ լիքերանոց, և մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրուէր Տէրիկի վանքին վրայ, որպէս հայկական ամբողջ մը: Սակայն բազմաթիւ քննութիւնները չյիշելով, 1894ի վերջերը Թաւրիզէն խրկուած իսահ խանի մանրագին խուզարկութիւնները ապացուցին որ այդ ամէնը լոկ նենգամիտ զրպարտութիւններ էին: Իսահ խան չքաշուեցաւ իր տեղեկագրին մէջ մտցնել և սա մանրամասնութիւնը թէ Տէրիկի վանքին մէջ իր գտած ամբողջ հայկական բանակը կը բաղկանար «պառաւ կնոջմէ մը, փոքր տղէ մը, պահապանէ մը եւ... շունէ մը:» Սատրագամը այս տեղեկագիր ստանալուն ներկայացաւ թիրք զեսպանին եւ իրողութիւնները պարզելէ յետոյ յոյս յայտնեց թէ այնուհետեւ տրամադիր չի պիտի ըլլայ անշուշտ «հաւատք ընծայելու ամէն լսածին:»

Ռուսիոյ դիտումները բոլորովին ասարեք են Պարսկաստանի վերաբերմամբ. նպատակը զուտ աշխարհակալական է, մանաւանդ որ կը կրկնի պատմական իրաւունքներու ուրոնք ձեռք բերուած են իր զէնքին յաջողութիւններովը: Թիրքը մէնչայի դաշնագրութեամբ, Ռուսիա իրաւունք սնի Ատրպատական 60,000 ռուս զինուոր լեցնել այն պարագային երբ վրդովուի այդ նահանգին անդորրութիւնը եւ քրիստոնեայ ազգարնակութեան վտանգ մը

սպանայ: Դիտողի և խորհրդածողի ցուրտ աչքով և պաղ արինով դիտուած զէպքեր եւ իրողութիւններ կը միաին սա եզրակացութեան տանելու թէ Ռուսիա՝ իր այդ իրաւունքին զօրութիւնը Պարսկաստանի գլխին վրայ միշտ ազդեցիկ պահելու նպատակով՝ երկրին քրիստոնեայ ազգաբնակչութեանց անպայման խաղաղութիւնը եւ անդորրութիւնը իր քաղաքականութեան նպատակայարմար չի՛ դաներ: Անհերքելի ճշմարտութիւն մըն է թէ 1896ին պարսիկ սահմանազիւն օսմանեան հողին վրայ կատարուած արշաւանքը, զոր Ռուսիոյ Հայեր սարքեցին, ռուսական իշխանութեանց թոյլտուութիւնը եւ անուղղակի աջակցութիւնը կը վայելէր: Երբոր Անգլիոյ եւ Թիրքիոյ դիտողութեանց վրայ՝ պարսիկ կ'ստավարութիւնը վերջին պահուն ձեռնարկեց այդ արշաւանքին զերակատարները նեղելու, հետեւեալ յատկանշանական խօսակցութիւնը տեղի կ'ունենար Թաւրիզի ռուսական հիւպատոս Պ. Բեկրովի և Ատրպատականի նահանգապետ Ամիր-Նիզամի միջեւ:

— Դուք ի՞նչ կ'ընէք մարդասպաններուն՝ ձեր կառավարութեան օրէնքով, կը հարցնէր հիւպատոսը Ամիր-Նիզամին:

- Կը սպաննենք:
- Հայերուն բրածն ալ առ է, ուրեմն ինչո՞վ մեղաւոր են:

Աւելի նորագոյն զէպք մը, որուն վրայ «Նոր կեանք» (1 յուլիս 1898) արդէն առիթ ունեցաւ խօսելու, մասնաւոր լոյս մը կը սփռէ այդ քաղաքականութեան ձգտումներուն վրայ: Ռուսական հիւպատոսարանի ծառան էր որ սկզբնապատճառը եղաւ 97 մարտ 20էն ապրիլ 10 թուարիկ տիրող խռովութիւններուն: Ատրպատականի առաջնորդական տեղապահ Հ. Սարաճեանի հեռագիրը, որով Շահին կ'իմացնէր թէ ձեռք առնուած միջոցներուն շնորհիւ ո եւ է վտանգ չի սպանար Հայերուն, ի դերեւ կը հանէր արտաքին ո եւ է միջամտութեան մը դիտումները: — Ռուսիա հիմա գտած է սակայն աւելի հզու եւ աւելի դիւրաւ գործածուելիք քրիստոնեայ տարր մը: Թաւրիզ յիշեալ խառնակութիւններէն յետոյ Պարսկաստան եկան ռուս քարոզիչ Սինադակի եւ ուրիշ քահանայ մը, որոնք Ռուսիա գացին եւ շատ կարճ ժամանակամիջոցի մէջ զանաշան խոստումներով յաջողեցան օրթոտոցութիւն տարածել Ասորիներուն մէջ, որոնք գրկաբաց ընդունեցին այդ նոր մեծիան: Հայերուն մէջ շատ թոյլ կերպով առաջ գնաց քարոզութիւնը, որովհետեւ այդ շարժման առաջըր առնելու խորհողներ և գործողներ կային: Չմոռնանք յիշել նաև թէ այդպիսիները հալածուեցան ու վտարուեցան:

Այսպէս ամէն անգամ երբ առիթ ներկայացեր է, պարսիկ կառավարութիւնը ստիպուել է, հակառակ իր շահերուն, լոկ դրացի տէրութիւններու պահանջին գոհացում տալու համար, հրամայել որ քննութիւն բացուի մեղադրանքները ստուգելու և խուզարկութիւններ կատարուին: Ահա այդ հրահանգներն ու հրամանները եղեր են Պարսկահայ ժողովրդին գոբազդութիւններուն նախադուռը: Ստորին պաշտօնեաներ, խաներ, ազաներ, իրենց անօթի

Ֆարրաշներու խումբերով, առիթէն օգտուեր են — հայ յեղափոխական, զաշախ, ձերբակալելու, խուզարկութիւններ կատարելու անուան տակ — կողոպտել ու սլուկել խեղճ հասարակութիւնը։ Ասիկա սովորական երեւոյթ մը դարձեր է այժմ Պարսկաստանի մէջ, եւ կարծես վերջ չունի։

Պարսիկ կառավարութիւն ըսելով պէտք է հասկնալ երկու դասակարգ, բարձր իշխանութիւնը եւ ստորին պաշտօնէութիւնը։ Միութարական է որ բարձր կառավարութիւնը, Շահ, Վալիաթ եւ ընդհանուր նահանգապետ, շատ լաւ կ'ըմբռնեն իրենց երկրին շահերը եւ միշտ իրենց նպատակն է եղած խաղաղ ու հանգիստ պահել իրենց քրտառնեայ հպատակները, մանաւանդ Հայերը։ Սակայն որովհետեւ Պարսկաստանի մէջ չիկայ որոշ օրէնք, որուն ենթարկուին թէ՛ պաշտօնէութիւն եւ թէ՛ ժողովուրդ, ուստի քմահաճոյքը մեծ դեր կը կատարէ։ Հազիւ թէ հրաման մը կը ստացուի Շահէն, ահա զերակատար պաշտօնեաներ, իրենց դատարկ զրպանները լեցնելու համար, ոչ մէկ ապօրինութեան, ոչ մէկ զեղծումի առջեւ կ'ընկրկին, անպատիժ մնալու ստուգութեամբ։ Ի՞նչ ալ ընեն։ Պետութեան պաշտօնեան Պարսկաստանի մէջ ո՛չ միայն որոշ ուժիկ չի ստանար, այլ ինքն է որ կը գնէ իր պաշտօնը, հազարներ կը վճարէ մինչեւ գործի գլուխ անցնելը, եւ տյնուհետեւ դարձեալ միշտ կը դրկէ այդ հազարները իր պաշտօնին վրայ հաստատ մնալու համար։ Հետեւանքը յայտնի է. պաշտօնեան ուրիշ առաջադրութիւն չունի բայց եթէ կարելի եղածին չափ շուտ եւ շատ բան ձեռք բերել, որովհետեւ դիտէ թէ՛ ի՞նչ ալ ըլլայ՝ իր պաշտօնը վազանցուկ է, ուրիշներու տուած կաշառները աւելի գործօն դեր կ'ունենան։ Իսկ եթէ իր կեղեքումներուն պատասխանատուութեան ժամանակը գայ, օձիքը ազատելու դիրքին միջոց մը ունի, ժողոված կողոպուտը կիսել իր դատաւորին հետ։ 97 ի ամրան Սալմաստի դատաւոր (հաքիմ) Շահզատէ Չաֆարի-Սալմանի եւ Սարփարաստի (քրիստոնեաներու միջնորդ դատաւոր) կատարած կեղեքումները այն աստիճանին եկած էին որ ժողովրդին թշուառութեան ու աղերսարկու բողոքին ձայնը մինչեւ Թէհրան հասաւ։ Շահը հեռագրեց որ անմիջապէս այդ պաշտօնեաները Սալմաստէն հեռացուին, բոլոր ստացուած կաշառքները ետ առնուելով ժողովրդին վերադարձուին, ու երկու կեղեքիչները որպէս յանցապարտ Թէհրան զրկուին։ Արդիւնքը։ Շահզատէն ու Սարփարաստը Թաւրիզ բերուեցան, ժամանակ մը հսկողութեան տակ մնացին, մինչեւ որ աւար բերուած մեծաքանակ գումարը հաւասար կերպով բաժնուեցաւ, իսկ իրենք նորէն ուրիշ պաշտօններ ստացան, անշուշտ իրենց մնացած բաժնին մէկ մասն ալ ծախսելով։

Վերջին երկու երեք տարիները Պարսկաստանի մէջ կրկնուող վկայքերը միօրինակ այս բնոյթը սնին ահա։ Բարձրագոյն իշխանութեան հեռագիր մը կը տրուի խուզարկութիւններ կատարելու համար, ստորին պաշտօնեաներ կը սկսին կողոպուտ, կաշառք, հալածանք, եւ այս

ամենը կը կատարուի շատ անգամ օսմանեան հիպատոսին զեկավարութեամբ եւ Ատրպատականի պաշտպան անունը կրող Ռուսոյ հիպատոսին աչքին առջեւ։ Տոմար կը վերջանայ անով որ ժողովրդի ողբին ձայնը Շահին ականջը կը հասնի, եւ կարուկ հեռագիր մը կը ստացուի որուն հետեւանքը կ'ըլլայ պաշտօնեաներու փոփոխում եւ ժողովրդին անգորրութեան վերահաստատում։ Սակայն հազիւ թէ մէկ երկու ամիս կ'անցնի, փոքր առիթ մը, ահա՛ դարձեալ նոյն սովորական խաղը։ Անցեալ ամրան Սալմաստի աւերումներէն ու կեղեքումներէն վերջ, հսկանութեան ամսուն, Ատրպատականի նահանգապետ Ամիր-Նիզամ Շահէն հեռագիր մը ստացաւ որ ի միջի այլոց հետեւեալ սիրալիր խօսքերը կը պարունակէր. «Լսելով Սալմաստի հայ հպատակներու վիճակը՝ շատ ցաւեցայ. կանչեցէք ձեզ մօտ Հայոց ճէն ապի խալիֆան, բարեւեցէք զինքը, կարգացէք այս հեռագիրը եւ ըսէք թող իր ժողովուրդին վստահութիւն ներշնչէ որ զաղթականութեան չզիմեն։» Սակայն այս հեռագրէն հազիւ երեք-չորս ամիս ետքը, դարձեալ խառնակութիւններ, Սալմաստը տակնուվրայ եղաւ, Թաւրիզի մէջ բանտարկուեցան երեք ուսուցիչ եւ 7-8 ուրիշ պանդուխտ երիտասարդ։

Վ. ՇԱՀԷՆԻ

ՄԱՐՏԻԿ ԱՂԱ

(ՊէճՊ)

Ա. Մ Ա Ս

Դ

— Զարուհի, սա կ'ոխտօնը հոս ազլի չերթար կոր... վարագոյրը քիչ մը վար առ... արդօք պակաս բան մը կ'ա՛յ... չորս կողմը ազլի նայէ...

Նորը իրանը հպարտօրէն ուղիղ, զլուխը թեթեւակի ետեւ, Տիկին Պէյլերեան — վարդագոյն ճերմակ դժքով կին մը, սիրուն, ջղային, անկողտ ու խուզարկու ողբերութեամբ մը կը պտուաքէր Շերիֆ-Փաշա փողոցին վրայ նայող աբաղթըմանի մը ընդարձակ հիւրասրահին մէջ, որ հանգիստաւոր ընդունելութեան մը պատշաճ՝ պաշտօնական կերպարանքը հագած էր, իր արդէն պերճ կահաւորումը պարագայական յաւելումներով շեշտուած, բոլոր լոյսերը վառուած, լայնանիստ թաւշպատ թիկնաթոռները, սօփանները իրենց ճերմակ ծածկոցներէն ազատուած, աթոռները զինուորական շարքի մը մէջ սպասող, պատուհանները ու հաղորդակցութեան դռները լայնաբաց։

— Զէ, ամէն բան տեղն է, պատասխանեց նոյնպէս նիհար ազլիկ մը, պզտիկ սիրուն դժքով, որ արագաշարժ ու թեթեւ սենեակին մէջ կը զանար։ Զեւրայ նորէն հայրս ներս մտնայ անցած զիշերտեան պէս, աւելցուց աշխոյժ շարժումով որ մօրը դանախով՝ որ դժքի բաւական գոհ

արտայայտութիւնով մը հայելիին մէջ կը դիտէր ինքզինքը, եանի առէս գետինը կ'անցնիմ :

— Վո՛ւյ աղէկ ըսիր, ըսելու է իրեն սր պատկի...

— Մ'ի պիտի ըտէ, կ'ելլայ կոխ կ'ընէ :

Պէյլերեան ընտանիքին կողմէն գիշերային երկսեռ հաւաքումներու համար որոշուած կիրակի իրիկուններէն մէկն է. մայր ու աղջիկ, հագուած սգուած, կը պտըտին լուսաշող սրահին ու սենեակներուն մէջէն, սրոնց արդուզարդին կուտան նկարչի մը վրձինի վերջին կատարելագործող հարուածները իր աւարտած կտաւին, քննելով, սրբագրելով, շահելով : Հագիւ երեք ամէ ի վեր Ալեքսանդրիա հաստատուած ընտանիք մը՝ Պէյլերեանները, տարօրինապէս հիւրասէր ու ցուցամուկ, ընդունելութիւններու և այցելութիւններու մենամուտներէն վարակուած, և որ լաջողած էր տեսակ մը տենդոտ բորբականտայով, ամէնուն նկատմամբ փութկատ, հրաւիրող, հաճոյակատար ձեւերով, ու քիչ մըն ալ շնորհիւ Գրիգորեաններէ, իրենց հետ բնակող ընտանիքի մը՝ սրուն ծանօթները իրն ալ եղած էին — իր սարժնը քաշել փայլուն ընկերութիւն մը որ կը բազկանար թէ՛ Պալէն գաղթած էն պատուաւոր — այսինքն եկեղեցին չընակող — ընտանիքներէն, թէ՛ բնիկ Հայերէ, որոնց նորեկներուն նկատմամբ ցոյց տուած արհամարհական վերապահումը կը քաշուրբէ : Չարածի բամբասանքներ կը շրջէին քաղքին մէջ այս ընտանիքին վրայօք, սրուն կինը և աղջիկը, հաւասարապէս սիրուն, իրենց աշխոյժ ու համարձակ վարմունքով չար լեզուներուն ետանդը կը քաշալերէին :

— Չարուհի, գունն է... հիւր եկաւ, վազէ՛, ձգէ հիւսն ատիկա...

— Օ՛, հրամանեցէք, հրամանեցէք...

Հիւրեր ներս կը մտնան, կին մը և մարդ մը, կը բազմին :

Տիկին Պէյլերեան, իր էն շնորհալի ժպտուն գեղով, կը նստի հիւրերուն գլխացք, մինչ Չարուհի, փութկատ, նորեկ տիկնոջ կ'օգնէ գլխարկը հանելու :

— Ի՛նչպէս էք, Սարգիս էֆէնտի, ի՛նչպէս էք, տիկին Վասիլիկ :

— Է՛հ, փառք Աստուծոյ, սանկ նանկ կ'երթանք կոր : Պալսեցի հարուստ վաճառական Սարգիս էֆէնտի խաղաղաճեան, և իր կինը : Ետտ յարմար լծուած զոյց մը : Սարգը, կարճահասակ, գիրուկ, խոշոր լեանուտ գլուխ մը, ժայռի պէս յամուտ ճակատ, հաստ իցնող պեխեր, կախուող կոր քիթ : Խաղաղ, պարարտ ձայնին ելեւջնեւուն, մարմին շարժումներուն, ձեւերուն մէջ՝ որոճացող կենդանիներու դանդաղութիւնէն, կոշտութիւնէն, պինդըլտութիւնէն բան մը : Արդէն գլուխը մխրճած իր լայն ու ծայրացից սուներուն մէջտեղ, յիշեցնելով եղի մը գլուխը՝ յամուրիեր իր լուծին առաջ, որուն՝ իր ուսերը շրջադիժը կը ձեւացնեն :

Իր քովը տատողուած է կինը, նմանապէս գէր, պայթող այտերով, կրկնակ ծնօտով, յոյր ծիծերը մէկ ծրար-

ներու պէս նստած ուռած փորին վրայ, ու թեւերը կուրծքին վրայ ծալուած : Իր ձեւերը, շեշտը տեսակ մը գոտալուծիւն, եսեմութիւն ունին, ու շրթունքներուն քովերը՝ արհամարհոտ ծալքեր երբ խօսի : Միշտ իր վրայ, տանը վրայ, պերճանքի, ճոխութեան, ծախքի վրայ, հարուստ մէկու մը հետ ամուսնացած աղքատ դասակարգի աղջկան մը շտեմ պարծենկոտութիւնովը, մեծքիթութիւնովը մեծարանող կին մը, մինչ իր ամուսինը, ճակատին քրտինքովը, — գրկանքներու, նուախտացումներու շնորհիւ, ժամանակով, համբերութեամբ ու կծծիւթեամբ հարստացած մէկը, ամէն տեղ, ամէնուն, գործի, զրամի վրայ խօսող, խնայողութիւն քարոզող, « ժամանակներուն » գէշութեան վրայ ողբացող, « յիմար ծախքեր » ընելէ արհամարհող, նոր տեսած մէկու մը նախ իր գործը հարցնող, — միայն առուտուրի մարդերուն պատիւ ընող, անգործներուն, զբաղիրներուն, « զրոյ կարգացողներուն » կրնակ պարճնող...

— Գո՛րծ, գո՛րծ... զո՛ւմ, ամէն բան զրամով կ'ըլլայ...

Կ'ընէին այդ մարդուն համար թէ, զո՛հ շրջալով զաղթականներուն ի նպաստ թաղականներուն կողմէն իրեն եղած խնդիրներուն կոշտ մերժումով մը պատասխանելէ, իրեն բան գործ ըրած էր իր ծանօթները համարել սր շեշտանկ խնդրութիւն մը ընեն :

— Ստակ տալու ատենն է հիմա... մ'ի գիտէ ի՛նչ պիտի ըլլանք... ամէն մարդ ինքզինքը մամտալու է :

— Կարճեմ կանուխ եկանք, ըսաւ տիկին խաղաղաճեան :

— Չէ՛, ինչո՞ւ, բողբոջ տանտիրուհին քաղաք-սվաբորէն, ճիշդ ատենն է :

— Ժամը քանինն է որ, Սարգիս աղա :

— Ժամացոյցս տունը մոտցեր եմ, յայտարարեց վաճառականը, գլուխը կախ ու ձեռքերը ծանդերուն կրթնցուցած :

— Ա՛խ, առ ի՛նչ գժուար բան եղաւ, հառաչեց տանտիրուհին տիկին վասիլիկին գանալով՝ յօնքերու ու շրթունքի հպարտօրէն խղճալի ծամաճոռումով մը... Պոլիս երկու ժամացոյց սենեակներէն հոս մէկ հաստ մը շունինք... Տիգրան աղային ըսի որ կա՛մ հոստեղէն գնէ, կամ Պոլիս գրէ որ զրկեն...

— Իրաւ, շեշտեց տիկին խաղաղաճեան գլխու գոտալ կատարուելով մը, մենք ալ կարասիի կողմանէ շատ նեղութիւն կը քաշենք կոր... ան կիւզէիմ կարասիներու, հայելիները, ժամացոյցները, պրոճները, քանալները, բոլորն ալ Պոլիս մնաց... Թող որ ասիէ աննի պիտի տամ, աւելցուց անհոյ շեշտով մը... Կուք նորէն բաւական շտկեր էք :

— Չէ՛, Կո՛ւք ալ, առ ի՛նչ է որ... Պոլիս տեսնայե՛ք, հինգ սենեակ...

— Պապա՛մ, ընդմիջեց անդիէն Սարգիս աղան, հիմա կարասի աննելու ատենն չէ... եղածովը զո՛հ ըլլայու է... Ամէն մարդ ինք գիտէ իրեն եղած վնասը :

— Հապա՛, մէջ նետուեցաւ անդիէն Չարուհի իրանի

աշխուժ մերձեցումով մը, Սարգիս էֆէնտին իրաւունք ունի... ես ըսի մամայիս, բայց մտիկ չբրաւ...

Տանտիրուհին յանդիմանական խոժոռ նայուածք մը ուղղեց աղջկանը որ լոնց կարմրելով:

— Սարգիս էֆէնտի խապառանձեան եւ իր կիներ. — Պ. Ստեփան Մարկոսեան. — Պարոն եւ Տիկին Գաւաֆեան. — Հրամանեցէ՛ք, նստեցէ՛ք...

Ստեփան Մարկոսեան, երսուն տարեկան երիտասարդ մը, Պոլիս գրագիր, հոս անգործ: Չարագացած կ'ըսեն զինքը, ինչ որ կը նշանակէ մեր մէջ ֆրանսերէն գիտնալ: Գիրք մըն ալ հրատարակած է ատենով, « 18 Նորավէպք, թարգմանեալք ի գաղիարէնէ », զոր ինք կը յիշէ միայն: Զուարճալի է տեսնալ թէ ինչպէս գիրութիւնը — ինչպէս ձինը հողիները — հարթած, կակուղցուցած է այդ մարգուն քով մարդկային մարմինն խորտուբորութիւնները, գրեթէ արգուկած է անոր շրջագիծը, սրունքները անշափօրէն լայնցուցած, մինչեւ զանոնք հասցնելու ասիւման փորին ցցուածքին, մտի ծայրերուն մէջ անհետացնելով վիզը, զլուխը՝ առանց փոխանցումի՝ շարունակութիւնը ընելով մարմինն մնացորդ մասին զոր յաջողած է այսպէս վերածել մտի, ճարպի կոյտի մը կը որ ու ծանր, տիկ ու զլան, եղիպատական կարճ վարունգի կամ գլմախի ձեւով:

Հակառակ ասոնց, Մարկոսեան ոսկեթել ակնոց զրած է, կարծես փափաքելով իր մարմինն կոշտութիւնը, թանձրութիւնը սրբազրել ակնոցին թեթեւ, ազնուապետական նրբութիւնովը, եզի մը պէս որ ուզած ըլլար, սնափառօրէն, ձիու մը վայելուչ աչապաններ հագնել:

— Աս ինչ գիրութիւն, պարոն Ստեփան:

— Գերութիւն ըսէք աւելի, տիկին, կը յարէ նրբօրէն խոշոր մարմինը, ընդհանուր ծիծաղի մը մէջ:

— Նէ՛ վար, նէ՛ եօք պագալըմ, — իշլէրտէն նէ՛ հապէր, կը խոկայ խոշոր կարծովի ձայնը Սարգիս աղային:

— Նէ՛ օլաճաք, պիտիկին կիպի, կը պատասխանէ Գաւաֆեան:

Գէր մըն ալ աս: Արջի ու խոզի խառնուրդ մը: Էն ցայտող բանը իր մէջ իր զլուխն է, ահազին բազմահատոր զլուխ մը, խոշոր ձմերուկի մը ձեւով, գրեթէ առանց վզի փակցուած կարճօտն պատկանելի մարմնի մը, տակառաձեւ ցցուած փորով մը բեռնաւորուած: Խծուծէ յօնքեր, մացառուտ պեխեր, լայնչի, մեծփոր քիթ մը, խոշոր աչքեր ուսած, ցցուած ակնագունտերով, ահագին խորշոմներով խորխորատուած գէմք մը. ձայնը ասոնց համեմատ: Կիներ իրմէ միայն անունը ունի: Ծանր, կոշտ, լայնփոր բաներու այդ գէզը ամուսնացած՝ շիղերու նիհար ծրարիկի մը, կնկան պշրող մարմինի մը հետ, քիչ մը անցած գեղեցկութիւնով — անհանդարտ, աշխոյժ, որ կը սրնգէ ու կ'այծուրատէ այդ խոշոր-թմբուկին, այդ գոմէշին քով:

— Է՛, տիկին Գաւաֆեան, Ալեքսանդրիան ինչպէս

եւ թէ Հայերը, զիրենք յատկանշող ճիւղի մը սովորոյթներուն, բարքերուն

յարմարելու, ինքզինքնին « ալաֆրանկա » քաղաք մը տեսնալուն պէս ինչ ինչ նորութիւններ մտցուցած են իրենց ընկերական կեանքին մէջ, շանալով զայն կարելի եղածին չափ ձեւել եւրոպականին վրայ: Ասոնցմէ մէկն էր անշուշտ աղաներուն, եփեկոտներուն՝ պարոններու ու հանրմներուն տիկիներու վերածուիլը, ճիշդ ինչպէս որ ֆէսերը գլխարկներու փոխուած, թրքական մամբը եւրոպական եղած էին, ու մականուններէն շատերը հայացած:

— Ան Պոլիս էր... հոս անանկ բան չի կայ... հապա՛, հոստեղ ասանկ է... հոստեղի սովորութիւնը աս է, ամենքն ալ իրարու նորաձեւութեան պասեր կուտան, նոր քաղքին բարքերը, սովորոյթները կը ծանօթացնեն իրարու:

— Ետտ աղուոր է, շատ սիրեցի պատասխանեց տիկին Գաւաֆեան — զոր Պոլիս պարզապէս Չապէ հանրմ կը կոչէին, — փողոցները, շէնքերը, մօտիկութիւնը... շատ աղուոր քաղաք է, օդն ալ աղուոր է. Պոլիս շատ տաք է կ'ըսէին Ալեքսանդրիոյ համար, բայց ընդհակառակը:

Հայերէն մաքուր խօսելու ձգտում մըն ալ երեւան եկած էր, մանաւանդ կիներուն քով: Անշուշտ տիկին մը պէտք չէ որ խօսի հանրմի մը պէս: Հայերէնի սգիտութիւնը սակայն յաճախ այդ ճիղը կը վիժեցնէր արտասանութեան եւ լեզուի ձախողութիւններու, ծիծաղելի սխալներու մէջ:

— Եթէ ինծի հարցնէք, ըսաւ Մարկոսեան ձեռքովը ակնոցը շտկելով քիթին վրայ, այս քաղաքին ազատութիւնը ամէն բան կ'արժէ:

— Այո՛, անշուշտ, ըսին քանի մը ձայներ:

— Կ'ըսեն թէ, յարեց տիկին խապառանձեան, Գահիրէն ասկէ աղուոր է... իրա՛ւ է արդեօք... Հա՛, զուք զացած էք Գահիրէ, տիկին Գաւաֆեան, ինչպէս գտաք « վերը »:

Տիկին Գաւաֆեան շուարած երեւոյթ մը առաւ.

— Երտակը, Գահիրէն ուրի՛շ, աս քաղաքը ուրի՛շ. Գահիրէն ուրի՛շ աղտորութիւն ունի, աս ուրի՛շ տեսակ աղտորութիւն...

Ասիկա նուիրագործուած բանաձեւն է. Գահիրէն տեսնող գաղթականները ուրի՛շ բառերով չեն բացատրեր Գահիրէի եւ Ալեքսանդրիոյ տարբերութիւնը:

Ուրի՛շ հրատիրեալներ կը հասնէին: Սրահը կը լեցուեր տակաւ. աղմուկը, ոգեւորութիւնը կը շատնար: Տանտիրուհին քիչ մը հպարտ, լուրջ, բարձրազլուխ, վերապահ կէս-ծպիտով մը կ'ընդունէր հիւրերը սրահին դռնէն, մեծ տիկինի մը պէս. իր աղջիկը, թեթեւ, խօլ, թոշող շարժումներով, ընդառաջ կը վազէր, կը խօսէր բարձրաձայն, կը խնդար, հիւրերը ներս կը բերէր, անոնց շուրջը կը զառնար փութկոտ, իւրաքանչիւրին խօսք մը, ժպիտ մը, ծիծաղ մը կ'ուղղէր, մէկէն միւսին կը վազէր, ասոր հետ խօսքը շաւարտած անդիլինին պատասխան մը կամ հարցում մը կը նետէր արագ, համարձակ, ժպտուն, այնքան էրիկմարդոց որքան իր սեռակիցներուն հետ:

Նիհարներ ալ եկած էին: Բերացի երիտասարդ վա-

ճ առական մը որ այս անդ նոր գործ մը բացած էր. քամուսած անուսած լաթի պէս չոփ չոր, խառնածի պէս կարնծած, մտերը ոսկորներուն փակած մարդ մը, կարծես գանկէ դէմքով, Տօմիէի անմահ Բօպլեր Մաքլերին ընկերինը յիշեցնող ճիտով մը: Սեփ սեւ փոսացած աչքեր ուրնը կը նային ինչպէս զղիւրները կը ծակեն: Իր կիներ, նիհար ու անուշ:

Քիչ մը անդին, պարօն եւ տիկին Գրիգորեան, Պէյլերեանենց հետ բնակող ընտանիքը. մարդը, բարձրահասակ, նիհար, — Ոսթրոկոստ մը, — կզակոսկրի ձև ունեցող երկայն անկիւնաւոր երեսով մը, կոտած մորթով, շեղէջ ճակատով ու ետեւ փախող մազերով: Քառուսնոց ակնուցաւոր ասնտի մը, շիբ, սեթեւեթեալ, որուն՝ իր կնկան ցամբած, թոռած, խոշոր ազեղ բերանով մը ճեղքուած զէտքը — ուր աչքերուն աղւոր, աշխոյժ երխաստարգութիւնը կը վիճի, կը բողբջէ մնացած մասին թոմթոկած պառաւութեանը զէմ — իրաւունք տալ կը թուի իսպիկնալու, քծնելու կիներուն, աղջիկներուն բոլորտիքը, թափած ակնանները մէջտեղ հանող շինծու ժպիտներով:

Հոս, քով քովի նստած են տիկին եւ օրիորդ Սէմէրճեան. մայրը, պառաւ, խորշումած զէմքով կին մը. աղջիկը, գունագեղ, առոյգ ու զուարթ. երեւակայեցէ՛ք սրմբած, թոմթոկած թուշեր՝ կտրուած ձմերուկի մը կարմիր, կայտառ երխաստարգութեանը քով: Ֆրանսուհի, Հելլենուհի պչրոս աշխոյժ շարժումներով, շարճճի ժպիտներով նուրբ, շատ գեղեցիկ աղջիկ մը, օրիորդ Սէմէրճեան, վայելչակազմ մարմինով, ճիտի պէս նեղ մէջքով, անթերի ճաշակով մը հագուած: Ճիշդ իր քովը նստած է օրիորդ Գրիգորեան, լեցուն միսերով, հայկական տիպարով թուխ աղջիկ մը, խոշոր աղւոր աչքեր, աղեղնաձեւ թաւ յոնքերու տակ, պատկերի մը պէս խկոք, հանդարտ, ամօթխածութեան սեղմիրանին մէջ խեղդուած, աչքերը վար, լուռ ու մունջ:

— Տեսք ինչ է ինչիրը, օրիորդ. ես անցեալ տարի Ալեքսանդրիա եկայ իբր զատասու տեղւոյս ազգային երկսես վարժարանին. Հոգաբարձութեան հետ մէկ տարուան պայմանագիր մը կնքեցի: Արդ, արձակուրդին, ես Պոլիս մեկնեցայ, եւ հոգաբարձուները խոտացան ինձի պայմանագիրը վերանորոգել: Պոլիս հասնելէ ամիս մը վերջը նամակ մը առի որով կը ծանուցանէին ինձի թէ պաշտօնիս մէջ վերահաստատուած եմ ընդհանուր հաւանութեամբ: Սակայն...

Պ. Արամ Սեղբոսեանն է որ կը խօսի օրիորդ Սէմերճեանին հետ: Կարճահասակ, մանրուկ, ճզգած մէկը, մեր այն զարդացածներէն որոնք սալնի տղայ ալ են: Հանդերձեղէնի վաճառատունն է մը եւ սափրիչի խանութէ մը միանդամայն կարծես զեռ նոր զուրս կը լաւ: Ակնոցով, անշուշտ: Մազերը ու շա պոս սանտրուած, պիտերը նրբալորուած ու սրածայր: Երկու սատ ճակատ ու խոշոր բերան: Ամբողջութեամբ խալիկ մը: Յաւիտենական յանկերգով մը, զոր կը կրկնէ առանց ձանձրանալու եթէ ոչ ձանձրացնելու, ատ սղան կ'անցնի Ալեքսանդրիոյ հայ

ընկերութեան մէջէն, փաստարանի աշկերտի պերճախօսութիւն մը հրամցնելով ունկնդիրներուն:

Յոյցէն տարի մը առաջ Ալեքսանդրիա կանչուած իբրեւ ուսուցիչ, տարեշրջանէն վերջ Պոլիս վերադարձած արձակուրդը հոն անցընելու համար, մէյ մըն ալ յանկարծ Հոգաբարձութեան նամակ մը կ'ընդունի — պայմանագրին վերանորոգումը ծանուցանող նամակէ մը մէկ ամիս ետք — ըսող իրեն թէ ա'լ յոյսը կտրելու է Ալեքսանդրիոյ վարժարանին վրայէն: Յոյցը սեղի ունեցած էր, ու փախստական ուսուցիչներ, կ'երեւայ թէ, Ալեքսանդրիոյ հոգաբարձուներուն աչքը մանկելով կիցի այդ հարուածը կուտային իրեն: Ամիսի մը շափ, մեր ուսուցիչը, այդ նամակները ձեռքը իր զայրացած ցաւին աղաղակները Պոլսոյ հայ ընկերութեան չորս արձագանգներուն տարտղնելէ, իրեն ծանօթ ամէն տուններուն մէջ պտտցնելէ ետքը, « իր իրաւունքները պաշտպանելու, այդ սպօրինաւոր գեղձումին զէմ բողբջ բառնալու համար » շոյե՛նաւ կը նետուի ու Ալեքսանդրիա հասնելուն պէս կը վերսկսի իր Պոլսոյ խաղը, հանդիպողին պատմելով իր զրլխուն եկածը, իրեն զէմ եղած սոսկալի անիրաւութիւնը, ժամերով, միեւնոյն ոճով:

— Ըրածնին պարզապէս խայտառակութիւն է, օրիորդ: Ինչ, ինձի նամակ կը գրեն կը ծանուցանեն թէ պայմանագիրը վերանորոգուած է, եւ վերջն ալ կ'ելլան այդ նամակը կը գրեն... ասիկա աններելի վիճաբանութեանն է, օրիորդ... ասիկա մեծապէս կը վտանգէ իմ՝ շահերս: Ահաւասիկ ինձի սրած նամակին, եթէ կ'ուշեր կարգավ, տեսէ՛ք իրաւունք ունի՞մ թէ ոչ...

Պ. Սեղբոսեան զլանիկը պնակին վրայ կը հանդէսցնէ, ու տենդոտ ձեռքերով բաճկոնին ներքնապրպանէն թուղթերու խառնազէզ մը հանելով կը սկսի մէջը փնտռել:

— Հոգ չէ՛, Պ. Արամ, կ'ըսէ օրիորդը, կարդալու պէտք չկայ...

Քիչ մը հեռուն սօֆային վրայ նստած է Գոճաի Լիւնէի պաշտօնեայ մը, լուրջ, ծանրաբարոյ յաղթանդամ մէկը, պարթեւ հասակով, վեհանձն ու բաց դէմքով, բարութեան ու խելացութեան խառն արայայտութեամբ մը փայլող: Ամէնէն յարուած, այն յարգանքով որով ստորին, սովորական մարդիկ զատապարտուած են իրապէս բարձր մտքով եւ սրտով էակներու առջև խոնարհելու: Իր կիներ, շատ գեղեցիկ, հոռոկական կիսադէմքով, ագնուական անուշութեամբ, և որ իր քոյրին ետեւէն՝ թափանցիկ շղարշի կտորի մը մէջ գրուած ֆօնտաւներու փափուկ, վարդագոյն, շոգեղէն ցոլքերը ունի:

Այս՝ բիշ շատ միեւնոյն ընկերական գաստիարակո՞ւթիւնը ունեցող, քիչ շատ իրար հասկցող անձերուն տաք ընտանութեանը մէջ անհաշտ խաղ մը կը դնէ սա անկիւնը, թիկնաթոռի մը ծայրը ամշկատօրէն կծկուած երսուն տարեկան մէկը, ամէնէն հեռու, կարծես աքսորուած, այդ ընկերութեան բարիան կարծես, այնչափ անզթօրէն կը զլացուի իրեն ո՛ր եւ է ուշադրութիւն:

Իր փռութիւն, սիրուն ձեւերը պահած էր օրիորդ

Պէլլերեան այդ հիւրին զոր տանտիրուհին գլխու աննշմա-
րելի շարժումով մը ընդունած էր. իրեն համար, ներկա-
յացումի ձեւակերպութիւնները զանց առնուած էին: Տան-
տիրոջ, Տիգրան աղային բարեկամներէն մէկը, որ ստոր
հրակրին վրայ յանդգնած էր գալ: Արդուզարգը, շար-
ժումները, խօսուածքը — երբ զիպուածաւ խօսէր կամ
խօսք ընդունէր — ամէն բան իր մէջ կը մատնէին պու-
սական քիչ շատ եւրոպականացած սալօններուն մէջ օտա-
րամտուած զործի—մարդ գաւառացիին հեզողութիւնները,
թոթով ձախաւելութիւնները, նորընծայի ամշկոտ անվար-
ժութիւնները, նեղուածքը:

Իրրեւ թէ եւրոպական ճաշակով հագուած, բայց ա-
նանկ անճարակութիւններով, մանրամասնութիւններու ա-
նանկ անհամաձայնութիւններով, ծիծաղելի հակասու-
թիւններով, որ մարդ կը փորձուէր, այդ անհեթեթ հագ-
ուածքին առջեւ, խորհիլ գողիերէն նոր սորվող տղաքնե-
րուն որոնց այդ լեզուաւ գրութիւններուն մէջ գծուարա-
զիւս լայնացա բացատրութիւններ, ճիշդ ասութիւններ,
ցուցամու սճարանութիւններ կը շաշին եւ բօնափ մը կը
ցցուին մնացած մասին անճարակ, միամիտ ու սխալ շա-
րայրութեանը մէջէն:

Շարվարի, լայն պարեգօտի ընդարձակ ազատութեանը
համար ստեղծուած զեղջուկ մարմին մը որ իր շիւ քալ-
ուածքով սրունքներով, իր ծոսութիւններով, կ'ըշտ խորտու-
բորտութիւններ վ, իր ահագին սաքերով կը բողոքէր զգես-
տին բնագործի շիքութեանը, նեղիչ անձկութեանը դէմ:

Տեսնելու էր խեղճին տանջանքը երբ անուշ կամ ուէ
ըմպելի մը հրամցուէր իրեն: Անուժ' նոյն իսկ մերժելու,
ամօթէն յուզումէն ձախող բան մը ընելու վախէն, ձեռ-
քերը իրար կ'անցնէին, կը շուարէին, անուշին քեսաէն
ձեռքը կը սնանար վայրկեաններով, անկարող փրցնելու,
կը աքնէր, կը խլ'ր, կը թոթովէր, աղտոտ զգալ մը կ'առ-
նէր, կամ աղտոտ զգալը մաքուրներուն մէջ կը ձգէր,
ջրի կամ ըմպելիքի գաւաթ մը առած ասեն՝ ուրիշ մը
տապալելու կ'ելլար...

Ու բոլոր ասոնք շարձածի նայուածքներու տակ, խեղ-
զուած քրքիջներու մէջտեղ, որոնց գուշակուած իր յուզու-
մը կը կրկնապատկէր:

— Շատոնց է որ հոս էք, կը հարցնէ միտիւ Մարտի-
րոտին՝ թուրիկ, թօնթոշիկ միտերով, խնդումերիս գաւա-
ռոցի սպասուհիի դէմքով կունտիկ խաթուն կին մը, որ
մայրն է քիչ մը հեռուն յաղթականօրէն բազմած՝ ազնուա-
կան բարի դէմքով, ամիրայական ձեւերով, մոխրացած
մազերով տեղացի հայու մը, թաղական, ու անդամ՝ Նը-
պաստամատոյց Յանձնաժողովին, գաղթականներուն հա-
մար էն անձնուիրութեամբ աշխատողներէն մէկը:

Շուտաւ, մարդը նախ չորս կողմը կը նայի, աեսնե-
լու համար թէ ո՞վ իրեն խօսք կ'ուզէ:

— Այո՛... բան... չէ... սա վերջին դէպքերէն ետք
եկած եմ, մարիկ, կ'ըսէ վանեցիի զօրաւոր շեշտով մը:

— Քաղաքը ինչպէս գտաք:

Իր պատասխանը փնտսել ու գանալէն վերջը երբ մի-

տի Մարտիրոսը կ'ուզէ զայն հաղորդել բարեսիրտ խա-
թունին, ասիկա իրմով չի զբաղիր ա՛լ:

Յանկարծ ծիծաղներու ընդհանուր շշուկ մը, շա-
րձածի բթթումներու ազդարարութիւն մը կը պատաքի
սրահին մէջ, բերնէ բերան, աչքէ աչք:

— Օրիորդ Մարաֆեանն է, օրիորդ Մարաֆեանը...
Ո՞վ է... խո՛ւզն է, խո՛ւլը...

Խոսմբէ խոսմբ, հիւրէ հիւր, Չարուհի կը վազվզէ, կը
հասկցնէ, տեղեկութիւններ կուտայ:

— Իշտէ... մեր վերի արտոթըմանին աղջիկը, միւ-
տի Մարաֆեանին քոյրը... խուլ է...

— Ամենեւին չի՛ լսեր:

— Բնաւ... ի՛նչ կ'ուզէք ըսէք:

— Վա՛յ... կ'ընեն բազմաթիւ քրքիջներ:

Օրիորդ Մարաֆեան, բառսուն տարեկան կոյս մը,
ներս կը մտնէ, կը ժօտենայ հիւրերուն, ձեռուրնին կը
թօթուէ Միւսի մը սւժնութեամբ — ներկայացումի պէտք
չկայ անշուշտ — ու կը նստի աթոռի մը վրայ, սիրունի,
հաճելի յաւակնող ժպիտով մը որ իր ժօռատ առամնա-
շարքին ցիցերը կը ցուցնէ, ծամածոտի մը մէջ կը ճւրթ-
կէ իր երկայն, ցամաք, խոշոր ծալքերով հեթիւած, ահա-
զին ցայտող բիթով մը պատշգամուած, անթառամ տղե-
ղութեամբ դէմքը — քանի որ տղեղութիւնը միայն չի թօս-
միր ու կը զարգանայ յանրափթիթ:

Ծիծաղները կը պտտէին հիմա արձակ համարձակ,
ցաւակցական խօսքերով:

— Ի՛նչպէս եղեր է... մե՛ղք:

Նստաւ չնստաւ, սկսաւ խօսիլ, ու ա՛լ վայրկեան մը
չլոցց ամբողջ երեկոյթին տեւողութեանը: «Մեղք, ի՛նչ-
պէս եղեր է» մը քակեց իր շատախօսութեան ծրարը,
չթունքին շարժումներէն մերթ խօսքը գուշակելու յատ-
կութիւնը ունենալով: Սկսաւ պատմիլ թէ ի՛նչպէս խուլ
եղեր էր: Ընդհանուր անուշադրութեան մէջ, ուրիշ խօսակ-
ցութիւններու ազմուկին մէջէն անդադար կը արանջար,
կը սաղմոսերդէր իր շղային, ճղզած զլիւսձայնը, շիթթ ու
տձեւ բզզիւն մը բառերու, անբնական շեշտով, այլայլած
արտասանութիւնով: Կը պատմէր թէ ինչպէս օր մը պտոյ-
տի գացած էր, ցուրտ օդ մը... ի՛նչպէս, ի՛նչ պարագա-
ներու մէջ, որո՛նց հեա՛ վաստիկած էր իր խլութիւնը...
Թէ ո՛ր բժիշկներուն դիմած էին — թէ՛ Պոլլիս թէ՛ հոս —
թէ ի՛նչ զեղեր առած էր, ու ի՛նչ եղած էր արդիւնքը: Կը
պատմէր ու կը պատմէր, կը կրկնէր, ետ կը դաճար, կը
վերոկօեր, առանց կանգ առնելու: Ծիծաղելի ու սղբազին
էր ասիկա: Ո՞վ մտիկ կ'ընէր իրեն, որո՞ւ հեա կը խօսէր:
Քիչ շատ ամէն մարդ, քիչ շատ ամէն մէկուն հետ: Հիւ-
րախումբին ամէն անդամները իրեն առեամանակեայ ուն-
կընդիր եղան, փոխն ի փոխ, մէկիկ մէկիկ: Վա՛յ անոր
որ ծիծաղկոտ հետաքրքրութեամբ կամ պատահաբար՝
համարձակէր իրեն նայիլ: Անմիջապէս կը բռնուէր ու հա-
մակերպելու էր մտիկ ընել մինչեւ որ ուրիշ անխոհեմ մը
զար կարթէն բռնուէր: Աչքերը պինդ գամած իր մէկ
հատիկ սնկնալորին վրայ, վախնալով որ չարծի ձեռքէն,

խուլը կը խօսէր, կը խօսէր... Եթէ զիպուածաւ կամ ուրիշ ունկնդիրներու իխոյզ, օրիորդ Սարաֆեան աչքը զատէր իր ունկնդրէն, ասիկա անմիջապէս, առիթէն օգտուելով, զուխը ուրիշ կողմ կը դարձնէր: Անանկ սր, երբ ճարահատ, խուլը իր նախկին որսին գանար, մարդ չէր գտնար: Առանց շուարելու, նեղուելու, ան կը շարունակէր խօսիլ, օգին մէջ, միեւնոյն ատեն սակայն իր խուլ դարիւ աչքը պտտցնելով բոլորակի դէմքերուն վրայ, զիպուածաւ կամ զիտուածով իրեն ուղղուած ուշադրութեան նայուածքէ մը օգուտ քաղելով՝ անխոհեմին կառչելու համար: Յաճախ ունկնդրին տանջանքը կը յաւերժանար, խեղճը կ'աղաղակէր «—Ազատեցէ՛ք պէ ինձի... Աստուծո՛յ սիրուն:» Այսպէս կարգաւ իրարու կը փոխանցէին ձիթօ կ'ընէին զայն, ազատուի, սփոփանքի բացազանջութիւններով, ու հեզնական շնորհատրութիւններով բռնուողին հասցէին:

—Քիչ մըն ալ դուն քաշէ, էօֆ, իմ խերս անիծուեցաւ պէ՛:

(Շարոյնակեյի) **ՊԱՐՈՅՐ**

ԱՆԳՆԱԿԱՆ ԲԱՐԵԿՈՐԾՆՈՒԹՅՈՒՆԸ

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԵՐՈՒՆ

(Շար. Նախորդ թիշէն, և վերջ.)

ՀԱՅԿԱԿԱՆ փրկութեան Յանձնաժողով, նախագահ Պ. Է. Բայր Պրուբս: Այս ընկերութիւնը 1896ի ամառը կազմուեցաւ՝ ամերիկացի Պ. Ու. Հովարտի թելադրութեամբ, Թիւրքիոյ մէջ հալածուող Հայերէն մաս մը Պարսկաստան եւ Ռուսիա գաղթել տալու համար: Պ. Հովարտ երկու անգամ այցելած էր Արեւելքը, եւ Նիւ-Եորքի Հայկական Նպաստամատոյց Յանձնաժողովէն յանձնարարադրելով, Լոնտոն եկաւ՝ յատկապէս այդ ծրագիրը շատագոյնելու համար: Հայոց համակրողներու երկու միջինկի մէջ իտրհրդակցութիւններէ յետոյ, որոշուեցաւ ընդունիլ Պ. Հովարտի ծառայութիւնը, որովհետեւ կը փափաքէր անձամբ ձեռնարկել զործին, եւ Մանչեսթրէն հանգուցեալ Պ. Յ. Գրոսը 1,000 սսկի նուիրեց այս գործին: Պ. Հովարտ Լոնտոնէն Պարսկաստան ուղևորեցաւ սեպտեմբերին: Իր ջանքերով, եւ թէ՛ Թիւրքիոյ ու թէ՛ Պարսկաստանի ամերիկացի միսիոնարներուն զործակցութեամբ, կը հաշուուի թէ ուղղակի եւ անուղղակի իր 12,000 Նեստորական եւ Հայ կրցան Սուլթանին կառավարութենէն փախչիլ 1896ի աշնան ու ձմրան, ու զործը շարունակուեցաւ երբոր Պ. Հովարտ Ամերիկա դարձաւ: Յանձնաժողովը կրցածին շափ օգնեց այդ խեղճ գաղթականներուն Պարսկաստանի ու Ռուսիոյ մէջ, եւ անոնցմէ շատը կարող եղան ապրուստին ճարելու: Հաւաքուած զումարն է 4,101 սսկի ուսկից 26 սսկի միայն

գործածուած է վարչական ծախքերու համար, և 1898 յուլիս 31ին պատրաստ կը մնար 137 սսկի: Յանձնաժողովը շնորհակալութեամբ պիտի ընդունի նոր նուէրներ, սրովհետեւ Պարսկաստանէն աւնուած լուրերը ցոյց կուտան թէ մեծ թշուառութիւն կը տիրէ հոն:

ԱՆԳՆԱԿԱՆ Կանանց Գինեհատութեան Ընկերակցութիւն, նախագահ՝ Լէաի Հէրի Սոմբրոկ: Այս հանրածանօթ ընկերութիւնը շատ աշխատեցաւ Հայերէն համար, թէ՛ զրամ հաւաքելով և թէ՛ հանրային կարծիքը յուզելով: Մասնաւորապէս 1896-97ի ձմրան հրաւեր ուղղեց իր բոլոր մասնաճիւղերուն սր հապուստեղէն հաւաքեն Պուլկարիոյ գաղթականներուն համար, եւ 80 խոշոր հակ զրկուեցաւ Վարնա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿՈՐԾՆԵՐ, նախագահ՝ Պ. Է. Բայր Պրուբս, քարտուզար՝ տիկին Գրոսֆիլա եւ օրիորդ Գէպլո: 1897ի սկիզբները թուեցաւ թէ Հայոց նպաստող ընկերութիւններէն շատին եռանդը պակսելու վրայ էր, ու փափաք յայտնուեցաւ ընկերութիւն մը կազմելու որուն նպատակը ըլլար նպատակի գործը շարունակել մինչեւ սր ա՛լ իրաւցնէ կարիք չմնար: Ընկերութիւնը իրեն երկու սկզբունքը դրած է. 1) Նպաստը անօգուտ է առանց Հայաստանի փրկութեան: Տեսնելով որ հանրային կարծիքին մէջ փոփոխութիւն մը անհրաժեշտ է՝ մինչեւ սր Հայոց կեանքին եւ ստացուածքին տեւական ապահովութիւն երաշխաւորուի, ընկերութիւնը իր նպատակներէն մին ըրած է Անդլիոյ ամէն կողմը Հայաստանէն տեղեկութիւն տարածել եւ տեղական ճիւղեր հաստատել: 2) Նըպաստը իր սղորմութիւն տրուելու չէ, հապա ծառայելու է ընկերական շէնքը վերականգնելու եւ ժողովրդին միջոց տալու որ ինք իր ձեռքով ճարէ իր ապրուստը: Նըպաստի գործը երեք ճիւղի բաժնուած է, որքեր պահել, թշուառ կանանց աշխատանքին արդիւնքը վաճառել, և կամաւորներ զրկել՝ օգնելու համար ամերիկացի միսիոնարներուն:

Ընկերութիւնը երբեմն երբեմն «Պատահական թերթ» կը հրատարակէ եւ Հայոց դատին համակիր 1,500 հոգիի կը զրկէ. նոյնպէս Անգլիոյ զանազան կողմերը 140 թղթակից ունի, որոնք 1էն մինչեւ 50 որք պահող մասնաճիւղերու քարտուզարներն են:

1897ին, Անգլիոյ մէջ մեծաքանակ հայկական ձեռագործ վաճառուեցաւ: Բայց ընկերութեան նպատակն է աշխատիլ որ տեղական արհեստագործութիւնը առեւտրական ամուր կառուանի մը վրայ հաստատուի. ասոր համար է միայն որ անգլիական հասարակութենէն կը խնդրեն աշակցիլ իրենց ձեռագործներուն վաճառմանը, եւ այսպէս ժամանակ տալ հայ կիներուն որ սորվին բանիլ այն ապրանքները որոնք իրաւցնէ պէտք կայ թէ՛ արտասահման եւ թէ՛ իրենց երկրին մէջ: Կը յուսացուի թէ Ուրֆա ու Կ. Պոլիս պիտի կրնան Այնթապի պէս արտադրել այն ապրանքները որոնք իրաւցնէ կը փնտուին Անգլիոյ, Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ, բայց Մալթա, Խորհրդ, Մարաշ հաւանորէն աւելի լաւ պիտի ընեն տեղական

հրապարակին համար միայն աշխատելով եւ մրցելով Մարդուանի հետ:

Ընկերութիւնը մինչեւ վերջերս հինգ կին զրկած է Հայաստան, որոնց երկուքը վարձ հիւանդապահներ են եւ երեքը սրբանոցի տեսչուհի: Չորս կին ալ նորէն պիտի զրկուին: Ասոնցմէ երեքը՝ իրենց ճամբու ծախքը իրենք կը հոգան:

Ընկերութիւնը 1897 յունուարէն մինչեւ 1898 յուլիս 31, տասնութ ամուսն մէջ հասոյթ սնեցած է 11,002 ոսկի, որուն 7,805 ոսկին նուէր, եւ 3,197 ոսկին ձեռագործի վաճառումէ: Այս գումարէն 6,724 ոսկին իբր նպաստ զրկուած է, 2354 ոսկիով հայ կիսերէն ձեռագործ գնուած է, 185 ոսկին՝ կամաւորներու պէտք եղած իրեղէններուն եւ ճամբու ծախքին դորձածուած է, ու 42 ոսկին՝ Անգլիոյ մէջ թշուառ հայ դաղթականներու տրուած է:

Հայաստանի Բարեկամները, տեսնելով որ կարելի չէ Անասուլուի ամբողջ թշուառութեան օգնութեան հասնիլ, ստիպուած են իրենց դրամը զրկել ամէնէն աւելի կարօտ վայրերուն: Իրենց խնամած որբերը աճուած են Տիարպէքի, Գլիի, Բալուի, Չմշկածափ պէս աչքէ հեռու վայրերէ եւ վանի, Էրզրումի ու Խարբերդի գիւղերէն. եւ թէպէտ վաճառ ու կ. Պոլիս ալ նպաստ զրկած են, բայց միշտ իրենց պարտականութիւնը նկատած են երկրին խորքու թշուառներուն աջակցիլ: Այսպէս կ'աշխատին արհեստագործութիւն հիմնել Մարաշ, Մալաթիա, Խարբերդ, Սեւերեկ եւ Տիարպէքի:

Ընկերութեան խնամած որբերուն թիւն է 500:

Հոստոնէն դուրս գտնուած կեղբոսներն են.

ՀԱՐՐԻՍԻ ՈՐԲԱՆՈՅՆԵՐ, Գէմպրիճ: Պ. Հարրիս եւ իր կիսը, որոնք շարդերէն յետոյ Հայաստան ճամբորդեցին, Անգլիոյ զանազան կողմերէն իրենց ստացած նուէրներովը կը պահեն հետեւեալ որբանոցները. 1) Ուրփա, 33 աղջիկ, 20 մանչ, Միս Շաղգըքի տեսութեան տակ: Հայերը 42 որբ կը պահեն իրենց վանքին մէջ, եւ Գերմանացիները (Տր. Լէսխուսի միջոցաւ) շատ աւելի բազմաթիւ որբեր: 2) Մալաթիա, 68 տղայ: Նոր տեղեկագիր մը կ'ըսէ «Մառն կախուած խնձորներու պէս են, մէկը միւսէն ազուար»: 3) Բաղէշի նահանգ. 20 Մասունցի տղայ Մսիւնը, 100 տղայ Բաղէշ: 4) Էրզրում, 69 տղայ: 5) Աին, 25 մանչ եւ 45 աղջիկ: Աինոյ մէջ մէջ նսե Պ. եւ Տիկին Հարրիս արհեստագործութիւնը ծաղկեցուցած են, 1,509 ոսկիի տէղեկահ ու մանած զընելով ու բաշխելով: 6) Արաբկիր 225 ոսկի զրկուեցաւ 1897ին. վերջին լուրերը այնչափ նպաստաւոր են որ ալ օգնութիւն չեն ուզեր:

ԳԱՂԹԱԿԱՆ Հայ Ուսանողներու Տուն, ՄԼասպըն, քարտուղար Պ. Թրէտկոլու եւ Պ. Ա. Արասոնց: Այս ընկերութիւնը օգնած է հարիւրէ աւելի դաղթականներու, եւ հիմա կը պահէ վեց ուսանող:

Տեղեկագիրը յետոյ կը յիշատակէ այն վայրերը որոնք ամէնէն աւելի նպաստ զրկած են վերոյիշեալ ընկերութեանց: Այսպէս կը տեսնենք որ Մանչէսթըր միայն 15,500 ոսկի հաւաքած է: Տեղեկագիրը զովետով կը յիշէ Պ. Մ. Մանուկեանի եւ Պ. Անդրէասեանի անխնայ աշխատանքը իրենց հայրենակիցներուն ի նպաստ: Կարելի չէ մոռնալ հանգուցեալ Պ. Գրոսլէն, որ Մանչէսթըրի հայասեր շարժման պարագլուին էր, ու կարելի է ըսել թէ իր շարաշար յոգնութիւնները եւ իր հայրենակիցներուն անտարբերութենէն կրած յուսախաբութիւնը փութացուցին իր մահը:

Սիոլտիա 30,000 ոսկի հաւաքեց: Հոն շարժումը շատ ընդարձակ էր, ու միզինկները բազմաթիւ:

Վեր ի վերոյ հաշիւ մը ընելով, կը տեսնենք որ ամբողջ Անգլիոյ մէջ Հայերուն ի նպաստ հաւաքուած գումարը 175,000 ոսկին կ'անցնի:

Լ. Զ.

ՕՐՈՒՍԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վիլհելմ կայսեր Թիւրքիա կատարած ուղեւորութիւնը քաղաքական ինչ հետեւանքներ ունեցաւ ու պիտի ունենայ: Ահա կարեւոր հարց մը որ կը զրուի քաղաքականութեամբ զբաղողներու առջև:

Անմիջական արդիւնքներուն շարքին մէջ յիշուեցան Սըլվազէն Էրզրում ու Տիարպէքիէն Պազտաս երկաթուղի մը ու Հայտար-փաշա նաւահանգիստ մը շինելու արտօնութիւնը: Բայց այս լուրերը զիս շատուցուեցան: Այդ արդիւնքներուն մէջ չենք յիշատակեր անշուշտ այն սընտուկներով ընծաները զորոնք սուլթանը Վիլհելմ կայսեր ու կայսրուհիին նուիրեց եւ որոնք Համպուրի հասան արդէն, այնչափ շատ որ ամբողջ վահան մը չէր բաւած զանոնք բովանդակելու:

Վիլհելմ կայսեր ուղեւորութեանը սկիզբը յեղյեղուեցաւ թէ այդ ուղեւորութիւնը քաղաքական նպատակ չունի: Բայց ահա արդէն գերմանական մամուլը կը յայտարարէ թէ ձեռք բերուած քաղաքական արդիւնքները այնքան կարեւոր են որ ամէն գերմանացի անհոյժով հպարտ եւ ուրախ ըլլալու իրաւունք ունի:

Ռուսական մամուլը հաշտ աչքով չնայեցաւ այդ ուղեւորութեան, ու շատ թերթեր զայրապին յօդուածներ հրատարակեցին Քայզերին դէմ: Ռուսները իշխանը — Ռուսիոյ էն կարեւոր անձերէն մին, ա՛ն որ ուստի ա՛ն քաղաքականութիւնը վէպի Չինաստան ուղղելու զազափաբին շատագոյններէն մին եղած է ու յաջողած — իր թերթին, «Բեդր. Վիլտուսութի» մէջ բորբոքած կը յայտարարէ թէ Վիլհելմ կայսեր վարժունքին առթիւ ստիպուած է գերման ազգը մեղադրել իբր դաւաճան ընդդէմ Քրիստոնէութեան: «Գերմանիա իր քրիստոնէական զգացումները, իր իսկական ձգտումները իրողած է՝ թիւր-

քիոյ մահմետական ժողովրդէն նիւթական առաւելութիւններ քաղելու յուսով: Ռուսիոյ հանրային կարծիքը մասնաւորապէս յուզուած է ի լուր այդ ուղեւորութեան ինչ ինչ մանրամասնութեանց, մանաւանդ լսելով Վիլհելմ մատուցած հարկը Սալահապադի գերեզմանին, այն Սալահապադի որ Երուսաղէմը քրիստոնեաներուն ձեռքէն խլեց: Վիլհելմ կայսրը իր բարեկամութիւնը հռչակելով երեք հարիւր միլիոն մահմետականներուն համար, աշակից գտնուած է քրիստոնէութեան թշնամի ուժերու:

Շատ զեղեցիկ խօսքեր են ասոնք, եւ անարձագանդ չանցան Գերմանիոյ մէջ: Գերմանիոյ մէջ շատեր են որ կը փափաքին պահպանել Պիղմարքի թողած քաղաքականութիւնը, որ էր Ռուսիոյ հետ միշտ հաշտ երթալ եւ Արեւելքի կողմէն ո եւ է արգելք չյարուցանել անոր: Կայսեր Գերմանիա զարձած օրը իսկ, «Միւնխենբեր Ալկէմայնէ Չայդունկ» կը հրատարակէր Պիղմարքի անտիպ յիշատակներուն այն զոյտը որուն մէջ մեծ դիւանագէտը կը յայտարարէ թէ «Ռուսիոյ հետ բարեկամութիւնը՝ Գերմանական քաղաքականութեան անկիւնաքարը կազմելու է:»

Բայց շատեր արդէն կը ջատագովին Գերմանիոյ արեւելեան քաղաքականութիւնը, զոր Վիլհելմ կայսրը սկսաւ ե այնքան յաջողութեամբ առաջ վարելու վրայ է: Կէս-պաշտօնական «Քրոս Չայդունկ» կ'ըսէ.

«Պատք է լաւ յարաբերութիւններ պահենք թիւրք կառավարութեան հետ, որովհետեւ տարբեր քաղաքականութիւնէ մը՝ մեր հակառակորդները միայն պիտի օգտուէին, առանց ամենապոյզն կերպով բարեբաղդաւ Արեւելքի քրիստոնեաներուն վիճակը: Դրական իրողութիւն մըն է որ Հայաստանի արեւելի վեպքերը ժամանակէ մը ի վեր կրկնուած չունին, եւ չենք վարանիր ասիկա մասամբ վերագրելու մեր արեւելեան քաղաքականութեան: Գերման կայսրութեան հետ բարուք յարաբերութիւնները մեծ արժէք ունին թիւրքի վարիչներուն համար, որոնք շատ ճարպիկ դիւանագէտներ են: Հիմուհի մը կը հաւատանք թէ պիտի չընեն բան մը որ ծանրապէս վտանգէ այդ յարաբերութիւնները: Մինչեւ որ հակառակը չպայտուցուի, թիւրքիոյ հետ մեր արդի յարաբերութեանց զգայնիկ քննադատները լաւ կ'ընեն եթէ վերապահ են իրենց գատաւանը:»

Ահա՛ խնդիրը մեզի համար, կենսական խնդիրը: Գերմանիա պիտի կրնայ հարկադրել սուլթանը որ երկիրը գոնէ բնակելի զարձնէ քրիստոնեաներուն առ հասարակ: Անգլիական մամուլին մէկ մասը այդ հաւատքը ունենալ կը թուի: Ուլտիմատումի զուգորդն նամակը, զոր «Նոր Կեանք» ալ հրատարակեց, «Բէլ Մէլ կազէզ»ի մէջ խոսիւ քննադատուեցաւ իբր հակառակ նոյն իսկ Հայոց շահերուն, սա իմաստով թէ Անգլիոյ բարեկամութիւնը մինչեւ հիմա ազիտաբեր եղաւ Հայերուն, թերեւ Վիլհելմ կայսեր նոր քաղաքականութեան հետեւանքը ըլլայ անոնց վիճակին բարւոքում մը: Պահպանողական աւելի մեծ թերթի մը, «Մորնիսկ Բոսպ»ի, Պերլինի թըղթակիցը կ'ըսէ մօտաւորապէս. «Գերմանիոյ կայսեր ու-

ղեւորութեան քաղաքական էն շօշափելի արդիւնքը եղաւ թիւրքիոյ գերմանահպատակ կաթողիկոսներուն պաշտպանութեան իրաւունքը ձեռք բերելը. (մինչեւ վերջերս այդ իրաւունքը Ֆրանսայի թողուած էր): Արդ, այդ իրաւունքը լոկ խորհրդանշան մըն է. ասով, Գերմանիա ոտքի կուտան մը, միջամտելու առիթ մը կ'ունենայ թիւրքիոյ մէջ: Թիւրքիոյ մէջ բարեկարգութիւնը վերահաստատելու մասին Անգլիոյ անկարողութիւնը՝ դաս մը ըլլալու է անպատասխանատու քաղաքականներու որ զսպեն իրենց անհամբերութիւնը, սպասելով Գերմանիոյ աւելի խոստումնալից մէթոտին արդիւնքներուն:»

Կը գառնանք կուգանք նորէն բուն հարցին. Գերմանիա եթէ ոչ իր զգացումներէն — հա՞րկ է նորէն կրկնել հասարակ զարձած ճշմարտութիւնը թէ դիւանագիտութեան մէջ զգացումը գործ չունի — գոնէ իր շահերէն զրոյւած, պիտի ուզէ, կամ, բուն կարեւորը, պիտի կրնայ սուլթանը մզել բարեկարգութիւններու ճամբուն մէջ: Անատին, մենք սիրայօժար պիտի մտնայինք Քայզերին պըժգալի սիլիկ-փիլիկը «իր բարեկամին» հետ: — Սպասենք վեպքերուն, ինչպէս խորհուրդ կուտան մեզի, գատաւան մը կազմելու համար:

Եւ սակայն ահա յատկանշանական վեպք մը: Սիփանի լերան վրայ վերաւորուած գերմանացի ուսուցչին, Պ. Պէլքի համար, Գերմանիոյ դեսպանը զեռ չյաջողեցաւ պատճել տալ յանցաւորները: Համիտիէ Քիւրտերն էին որ այդ ոճիրը գործեցին, ու անոնց մեծը, տիրահոջակ Հիւսէյին փաշան, պատասխանատու բռնուեցաւ: Բայց Գերմանիոյ ու Անգլիոյ բողոքներուն հակառակ, Հիւսէյին փաշան, ո'չ միայն վանէն չհեռացուեցաւ, այլ իր մազին թելին անդամ չզգան: Երբ յանցաւորները իրմէ ուզուեցաւ, Երզնկայի Դ. զորաբանակին հրամանատար Չէքի փաշային՝ Քիւրտերուն մեծ պաշտպանին՝ հեռագրով կը հարցնէր թէ յանձնելու է զանոնք: Ու հիմակ ալ, կատակերգութիւնը կատարեալ ըլլալու համար, կը յայտարարէ թէ ոճիրը գործած Քիւրտերը Պարսկաստան փախած ըլլալով, կարող չէ բան մը ընելու: — Սուլթանը իր հին խաղը շարունակելու վրայ է, միեւնոյն յաջողութեամբ: Միթարական չէ ասիկա:

* * *

Ուշադրութեան արժանի երեւոյթ մը, վերջին ատեններս, Միացեալ-Նահանգներուն սկսած ուժով քաղաքականութիւնն է թիւրքիոյ մէջ: Նոր դեսպանը, Պ. Սլորաուս, յաջողեցաւ նախ իրաւունք ձեռք բերել Էրզրումի մէջ հիւպատոսութիւն մը հաստատելու, որ տեղական գործերուն թիւ շատ միջամտելու իրաւունք կ'ենթադրէ, ու ասիկա պաշտպանութիւն մը աւելի է մեզի համար: Դեսպանը նոյնպէս բոլոր ուժոյն կը պնդէ որ 1893 և 96ի վեպքերուն մէջ ամբրիկեան միսիոնարութեանց կրած վնասները հատուցուին, եւ մինչեւ իսկ Իզմիրի կամ ուրիշ նաւահանգստի մը առջեւ նաւային ցոյց մը ընելու սպանալիքներ կը պտըտին օդին մէջ:

Սպասելով ասոր, Պ. Սղրաուս ուրիշ յաջողութիւն մը ձեռք բերած է: Յայտնի է թէ տարիուկէսէ ի վեր Փոքր-Ասիա ճամբորդել ուզող օտարականներուն քեզքերէ տալու համար՝ թիւրք կառավարութիւնը ամէն կերպ զժուարու-թիւն կը յարուցանէ, հակառակ զեսպանասանց կրկնակի զիմուսներուն: Պ. Սղրաուս Կ. Պոլիս հասնելուն տեսաւ որ եօթը ամերիկացի միսիւնար այսպէս չէին կրնար Փոքր-Ասիա վերադառնալ, ու սաստկապէս բողոքեց այս անպատեհութեան դէմ: Հետեւանքը այն եղաւ որ Գուոր յայտարարեց թէ քեզքերէի նոր կանոնադրութիւնը ետ առնուած է, եւ առաջուան պէս օտարականներու ամէն զիւրութիւն պիտի արուի Անատոլու ճամբորդելու: Գուորը կը խնդրէ միայն զեսպաններէն որ իրեն աջակցին՝ «Թող չի տալու համար որ խռովարարներ ու անիշխանականներ թիւրքիս մտնեն:»

Միացեալ-Նահանգները Հայաստանէն շատ հեռու են, կը յայտարարէր վերջերս Պ. Սթէտ: Անշուշտ չենք սպասեր որ Ամերիկեան Հանրապետութիւնը զործնակա-նապէս միջամտէ Հայերուն ի նպաստ: Բայց ակնհայտ է որ իր համակրանքը ու բարոյական պաշտպանութիւնը, հիմակ որ իր ձայնը ամէն ժամանակէ առելի հեղինակաւոր է, ի հարկին պիտի կրնան զործածուիլ մեզի ի նպաստ:

Լ. ՉՈՐԹՈՒՄԵԱՆ

ԼՈՒՐԵՐ

Նորէն տխուր լուրեր Հայաստանէն:

Որոշ տեղեկութիւն մը չի կայ: Բայց կ'ըստ թէ Վա-նի մօտ կոտորած մը տեղի ունեցեր է, ու 32 ձողի սպան-նուէր էն: Թիւրք կառավարութիւնը բացարձակապէս կը հերքէ եղելութիւնը, բայց գիտէք թէ միշտ այդ հերքում-ները ելան մըն եւ եղելութեանց ծանրութեանը: «Տէ՛յի թեղեկրափ» ի Կ. Պոլսոյ բողոքիցը կ'իմանայ անգլիական զեսպանատուներէն թէ «Հայաստանի այդ կողմերը կատար-եալ անիշխանութիւն կը տիրէ, եւ շատ հաւանական որ խռովութիւններ պատահին մանկեղանակներուն կողմ: Ինչպէս թրիստոնեաներուն:»

«Սրանտարտ» ի հետագիւր մը կը ծանուցանէ թէ աւ-դիս, Կ. Պոլիս, սուրբաւոր լոյր հանրագիր մը ստորագրել կոչուայ Հայոց Պատրիարքարանին եւ վարչութեան թէ Հայերը գո՞ն ու երջանիկ եւ օտմանեան բարեխառն վար-չութեան ներքէ: Որի՞ համար է այս գաշտը: 1890էն ի վեր այդ կարգի շեղումակառքեան ուղերձներու զեղը կը շատեայ ու կը խոշորեայ. ի՞նչ արդիւնք ունեցան:

— Հոսմ գոշտարուէլիք Համաժողովի մէջ՝ որ պիտի խորհրդակցի անիշխանակներուն դեմ ձեռք առնուէլիք տնօրինութեանց մասին, օտմանեան պատուարակ Նշարի պէյ պիտի խնդրէ եղեր որ «Ժրեկի եւ ուրիշ տեղերու Հայերն ալ իրր անիշխանական նկատելով» որոշուէլիք տնօրինութիւնները անոնց նկատմամբ ալ ի գործ դրուին:

— Յաւաջիկայ դեկտեմբեր 6ին Լոնտոնի Ս. Պետրոս եկեղեցիէն մէջ գոնարանական մարտիկ պիտի մատուցուի:

Կրետէի պատմանք ասիւ: Կրատարնէ աղջիկը, տիկին Մերի Տրիոն, Հարարնէն հետեւեալ նամակը ուղարկած է այդ նպատակով կազմուած յանձնաժողովի.

«Շատ կը ցաւիք որ չի պիտի կրնանք ներկայ գրու-նուիլ գոնարանական աղօթքին: Ինձի կը քուի թէ ոչ մեկ բաւ պէտք եղածին չափ ուժով է՝ նկարագրելու համար թէ հայրս ո՞րչափ պիտի հրձուէր Կրետէի պատմանք հա-մար: Անցեալ տարի, եղն իսկ անկէն մնայլ օրերուն, վստահ էր թէ Յունաստան օր մը պիտի վարձարուէր՝ Կրետէի պատուարեանը համար բախած արեանք փոխա-րէն: Միշտ կը բաղձար որ Անգլիացիներ նամատակուէին այդ դատին համար, որովհետեւ կը քուի թէ ասիկա մի-այն պիտի կրնար Անգլիոյ բերանէլ տալ իր պարտակա-նութիւնը: Այդ գիտութիւնները եւ նաշակները ի գոշտ չմեան:

«Մայրս ինձի կը ձայնակցի այս գրածիս համար, բայց կը փափարի աւելցնել թէ «Կը բաղձար որ Պ. Կրա-տարն ետ դառնար, եղն իսկ իր վերջին ամիսներուն կիսմելի կեանքովը, որպէս զի կարենար գիտնալ իր այն-քան արտակց բղձացածին իրականացումը:»

— Պ. Հերպերդ Կրատարն, որ անգլիացի դրամատիկ-ներու խմբի մը կողմէ Պարոզ գացած էր, ետ կը դառնայ հիւանկ, հոն ետքի նոր հարկեր գնելի յետոյ: Այս վերջին մեկ քանի տարիներուն մէջ չորս միշտն անգլիական ու-կի բախած է Պարոզ: Հայերը պիտի հասկնան, շատ ուշ սակայն, թէ ի՞նչ սխալ մը կը գործեն կոր՝ իրենց հարստու-թիւնները ձեռքէ հանելով:

— Ծրանական «Ռիս» գաշտարարքին մէջ պատ-կեր մը կը ներկայացնէր վերջերս Վիլմել կայսրը որ, սուրբանի հետ, Հայերուն վրայ հրացան կը պարպէ՝ գրունելու համար: Հեղձեռն այսպէս ողբալի համար մը կը շինուի ու կ'անրապնդուի կոր մեզի համար թէ «չարստու» ժողովարդ մըն էն: «Հայ» ու «չար» հո-մանիշ կը դառնան կոր:

— Հիւսիսային Լոնտոնի ոտակականական ատեանին առջեւ գոշտարձալի տեսարան մը տեղի ունեցաւ անցեալ օր: Ոտակականները բանած դատաւորին առջեւ բերած էին փո-ղոցները բախաւող պատար կիս մը: Դատաւորին հարցա-քննութեան երեջար որ խեղձը հիւնց հատ օտմանեան 6 աւ հարիւր 100 անց արժեքուող ունեւ, որոնք հիւս ստակայն հարիւրի մեկէն աւելի չեն բերեր:

— Թիւրքիոյ սուրբաւոր, ըստ պատար, շատ նեղն է հիւանկ, գործերը գեշ կ'երթան կոր:

- Վալ:
- Այս, բաշական տարի կայ որ սեանկացած է:
- Վալ:
- Այս, բայց թիջ ատեան պիտի կրնայ եղեր այնպէս մը ընել որ անկողջ դրամս սանկմ:
- Դատաւորը, հեղեակական ժպիտով մը. — Մարդերը որ խոստումը պանէ:

Հ Ա Ս Ց Է

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.